

Վ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

ԿՐՈՆԸ
ԺՈՂՈՎԱՐԴԻ
ՈՊԻՈՒՄՆ Ե

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

RECEIVED

NOV 19 1950

POST OFFICE

DEPT. OF AGRICULTURE



NOV 19 1950

ՎԼ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ



215
U=25

ԱՅՈՒԿԱՄ Է 1961 թ.

ԿՐՈՆԸ— ԺՈՂՈՎՐԴԻ ՈՊԻՈՒՄՆ Ե

ՓԿԻ



ԳՐԱԳԵՄԱՐԱՆ ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԵՄԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1987

A $\frac{\text{II}}{5383}$

Գրքագիր՝ Ռ. Իրանցյան

Պատ. խմբագիր՝ Գ. Սևդրակյան

Ցեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան

Պրբագրիչ՝ Խ. Այվազյան

Կանտոր սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Չլավիտի լիազոր Խ--9311

Հրատ. № 4366, պատվեր № 941, արժույթ 15.000

Հանձնվել է արտագրության 1937 թ. նոյեմբերի 29-ին

Մատրագրված է արտագրության 1937 թ. դեկտեմբերի 2-ին

Կրօնի պաշտպանները սովորաբար հավատացնում են, թե
սատժուն հավատալը մարդու բնածին հատկությունն է:

Դժվար չէ այդ հայացքը հերքելը:

Մարդկային մտքի պատմութիւնը ցույց է տալիս, Վոր թե
ստրկատիրական, թե ֆեոդալական, թե կապիտալիստական հա-
սարակությունների մեջ անաստվածները միշտ ել քիչ չեն յեղել:

Արող կ'ւրտուրական աշխարհին հայտնի յեն հին դարե-
քի այնպիսի ականավոր աթեիստների (անաստվածների) անուն-
ներ, ինչպիսին են հույն Դեմոկրիտը և Եպիկուրը կամ հոռոմա-
յեցի Լուկր'ցի Կարը: Բայց չէ վոր նրանք միայնակ չէին:

XVI I դարում Պրանսիայում, յերբ բուրժուազիան կովում
էր ֆեոդալական կարգերի դեմ, նրա լավագույն ներկայացու-
ցիչներն աթեիզմ էյին քարոզում: Դիդրոյի, Գոլբախի և այն
ժամանակի ուրիշ անաստվածների գրվածքները մեր որերում հե-
տաքրքրությալը կարգացվում են և մեծ ոգուտ տալիս:

Պրոյետարիատը ներգրավելով հեղափոխական պայքարի
մեջ, դառնում է աթեիզմի ավելի ու ավելի հետևողական մար-
տիկ: Նրա առաջ որդները՝ Մարքսը, Եսգելսը, Լենինը, Ստալինը
մարտնչող անաստվածներ են: Կո'ունիստական կուսակցություն-
ների անգամները—աթեիստներ են:

ԽՂՄ-ում անաստվածների թիվը շատ արագ է աճում: Մի-
լիոնավոր աշխատավորներ կրօնից ընդմիշտ խզիլ են իրենց կա-
պիլը:

Այս փաստերը հերքում են այն հայացքը, վոր իրը թե
մարդն առանց սատժուն հավատալու չի կարող ապրել:

Միք մեծ ուսուցիչներ Մարքսն ու Լենինը սովորեցնում են,
վոր կրօնի առաջաման հիմնական պատճառը ճնշումն է և մարդ-
կաց նորությունն այդ ճնշման հանդեպ:

Կապիտալիստական հասարակության մեջ ճնշված վիճակում
են գտնվում գործարանների ու ֆաբրիկաների, յերկաթուղիների

և նավագնացությունները, կալվածատիրական և կուլակային տնտեսությունները, առևտրական ձեռնարկությունները բանվորները—մի խոսքով, բոլոր նրանք, վորոնց բանվորական ուժը կապիտալիստները գնում են, վորտեպզի, վորքան կարելի յե, մեծ շահույթ քամեն նրանցից իրենց ոգտին:

Կապիտալիստական հասարակության ճնշումն զգում են կապիտալիստական գյուղի թե չքավորները և թե միջակները, վորոնք միշտ գտնվում են անտեսական քայքայման սպառնալիքի տակ, ինչպես նաև անայնպիսի արհեստավորները: Հարյուրավոր միլիոն աշխատավորներ իրենց վրա կրելով հայրենի շահագործողների ճնշումը, միաժամանակ հառաչում են նաև ստարյերկրյա կապիտալիստների անտանելի ճնշման տակ, ինչպես, որինակ, Հնդկաստանում, Կորեայում, Չինաստանում, ինչպես որինակ՝ նախահեղափոխական Ռուսաստանում հառաչում էլին Ֆինները, լեհերը, ուկրայնացիները, ուզբեկները, տաճիկները, վրացիները և ուրիշ շատ տասնյակ ժողովուրդների աշխատավորները:

Ճեղքալակայն հասարակության մեջ ճնշված էլին ճորտ գյուղացիները, վորոնք կալվածատիրոջ համար կատարում էլին կոտորու բեզյառը և վճարում էլին նրան բնատուրք: Այն ժամանակներում չարքաշ կյանքով էլին ապրում նաև յենթավարպետները ու աշակերտները, վորոնք աշխատում էլին իրենց տերերի արհեստավորական արհեստանոցներում:

Ստրկատիրական յերկրներում ճնշված էլին ստրուկները, վորոնք պատկանում էլին ստրկատերերին, աշխատում էլին նրանց համար և զրկված էլին մարդկային ամեն տեսակ իրավունքներից: Դժվար էր կյանքը նաև քայքայված կամ քայքայվող ազատ գյուղացիների ու արհեստավորների համար:

Իսկ առաջ, յերբ դեռևս շահագործում չկար, վորովհետև դեռ պատկարգեր չէային, մարդիկ հեծեծում էլին բնության տարերքի ճնշման տակ, քանի վեր բնությունը նրանց համար դժան խորթ մայր էր:

Դանվելով տարերքի ճնշման տակ, մարդիկ ստեղծեցին իրենց համար ֆանտաստիկ պատկերացում այն ուժերի մասին, վորոնցից էր թե կալված և կյանքի մեջ հաջողություն և անհաջողություն ունենալը:

Լենինը կրօնի և նրա արմատական պատճառների մասին այսպիսի է գրում.

Եկրոնը հողևոր ճնշման տեսակներից մեկն է, վորն ամեն տեղ և ամենուրեք ընկած է ժողովրդական մասսաների վրա, վորոնք ճգնված են հավիտենապես ուրիշների համար աշխատեցուց, կարիքից և մենակությունից: Եանագործվող դասակարգերի անդորությունը շահագործողների հետ ունեցած կոպում, նույնպես անխուսափելիորեն առաջ է բերում հավատ դեպի այլեւի լավ հանդերձյալ կյանքը, ինչպես վոր վայրենու անդորությունը բնության հետ ունեցած կոպում, առաջացնում է հավատ դեպի աստվածները, սատանաները, հրաշքները և այլն:

Նա, ով իր ամբողջ կյանքում աշխատում է և կարիքի մեջ է, կրոնը նրան սովորեցնում է հեղություն և համբերություն յերկրային կյանքում, մխիթարելով լերկնային պարզեի հույսով: Իսկ նրանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը սովորեցնում է յերկրային կյանքում բարեգործություն անել՝ առողջարկելով նրանց շատ արժան արդարացում իրենց ամբողջ շահագործական գոյության համար և ձեռնառու գներով ծախում է նրանց յերկնային բարեկեցության տոմսեր:

Կրոնը ժողովրդի ոպիումն է (հաշիշը): Կրոնը հողևոր ազումի տեսակն է, վորի մեջ կապիտալի սարուկները խեղդում են իրենց մարդկային կերպարանքը, խեղդում են մարդուն փոքր շատե արժանի կյանք ունենալու իրենց պահանջները*):

Լենինի այս ուշադրավ խոսքերը կարոա չեն բացատրության, քանի վոր նրանք ոյնքան պարզ ու հասկանալի յեն:

Մարքսը գրում է.

Եկրոնական աղքատամտությունը ժիւթամանակ հանդիսանում է չքավորության իրականության արատհայտությունը և բողոք իրական չքավորության դեմ. կրոնը — սոճն ճնշված արարածի հառաչանքն է, անսիրտ աշխարհի հողին է, անհողի ձախող ժամանակի վողին է: Նա ժողովրդի ոպիումն է**):

*) Լենին — Մոցիսալեզն ու կրոնը, հատ. VIII, էջ 419 (սուս հրատ):

***) Կ. Մարքս — Լեզեյան իրավունքի փելիսոփայության ըննադատության մտտին: Յերկիր, հատ. I, էջ 309:

Կրօնը—դա ճնշված արարածի հառաչանքն է: Յեւ իսկեպես, միթե հավատացյալ մարդու կրօնականութիւնը չի ուժեղանում, չե բազմապատկոււմ, չի հասնում այնքան ավելի մեծ ահտիւթեցան, վորքան ավելի ծանր են դասավորվել նրա կյանքի պայմանները:

Վերցնենք այժմյան վորեւ կապիտալիստական յերկրի կամ նախահեղափոխական Ռուսաստանի դյուղի սովորական միջակ ընտանիքը: Ինչպես կանոն, այդ ընտանիքի անդամները հավատացյալներ են. չե՞ վոր նրանք շարունակ իրենց վրա դրում են կապիտալիստական հասարակութեան ճնշումը: Բայց յերբ այդ ընտանիքում հանգամանքները բարեհաջող կերպով են դասավորվում, որինակ, բերքը լավ է լինում, դնիւրը՝ բավարար, ապագայի հեռանկարները վատ չեն, ամբողջ ընտանիքն առողջ է, այդ դեպքում վոչ մի առանձին կրօնական աշխուժութիւն այդ ընտանիքում չի յերևում: Մարդիկ կատարում են յեկեղեցական բոլոր արարողութիւնները, ինչպես վոր ընդունված է, աղոթում են առավոտյան և քնելուց առաջ, ինչպես սովորել են այդ անել ամեն որ, բայց այդ աղոթքն ճակատիվ չի, սրտատուչ չի: Ընդհակառակը, յեթե ընտանիքին վորեւ դժբախտութիւն է հարվածել, որինակ, հիվանդութիւն, անբերրիութիւն, անասունների անկում և այլն—կրօնասիրութիւնը բարձրանում է և սառեկանում:

Հավատացյալ մայրը կամ ատան իր սրբապատկերի առջ կիրականամուտին և մի քանի ուրիշ, վորեւ բանով նշանավոր, որերին կանթեղ է վառում, իսկ յեթե յերեխան—աղան կամ թօռը հիվանդանում են վտանգավոր հիվանդութեամբ—այդ դեպքում կանթեղն սկսում է ամեն որ վառել: Բայց հենց վոր յերեխան սկսում է դեպի լավը գնալ, իսկույն կանթեղի մասին մոռանում են, այն վառելով միմիայն սովորական սրերին:

Ծանր հիվանդութեամբ տառապող հավատացյալները հանդիսանում են յեկեղեցիների և, այսպես կոչված, «հրաշագործ» սրբապատկերների ամենորոյտ և մշտական հաճախորդները, ընդ վրում նրանք, ինչպես ասվում է, աղոթում են ամբողջ հողով բայց յեթե նրանք կարողանում են առողջանալ, նրանք արագորեն վերականգնում են յեկեղեցի հաճախելու հին նորմաները, յերկայ ժամանակով մոռանալով Մերգի Բաղանեժակու սրբապատ-

կերով մասուսէի գոյութեան մասին, բազմաշաքիաց Կառնաւայի, Իվերսկու մայր աստվածածնի և որանց նման Վերադարձութեան սրբապատկերների մասին:

Համաճարակների ժամանակ, յերբ ծաղիկը կամ խոխրան ասանյակ ու հարյուրավոր հազար մարդիկ եր հնձում, իհարկէ, գլխավորապես աշխատավորներէ միջից, կրօնական մուսուլմանութեանն ընդգրկում եր ամբողջ քաղաքներ ու դըրուք, և յեկեղեցիներն աղբթողներից տրաքում էին: Յերկարատե յերաշախ կամ մորեխի հարձակման ժամանակ վոչ թի անհատներ, այլ դըրուգացիական մասսաներ տանում էին յեկեղեցի քահանաներին տալու իրենց հինգ կոպեկնոցները և աղերսներ էյի ատաքում աստվածներին անձրի ուղարկելու և զնասատուից աղաթելու համար:

Պատմութեանը մեկ ցույց և առիւթ, վոք բոլոր ժամանակներում, յերբ ժողովրդական մասսաների գրութեանն առանձնապես ծանր եր լինում, յերբ ապրելն ուժից վեր եք դառնում, ինչ պայքարը ճնշման և շահադրժման դեմ թվում եր անհույս, կրօնասիրութեանն արագ կերպով ուժեղանում էր: Մարդիկ փրկութեանը վորոնոյս էյին կրօնի մեջ: Իրենց կին աստվածներէց ողնութեան շատանալով, նրանք դիմում էին ուրիշ աստվածների, ստեղծում էին նորերը: Այդպես թռալ յեկեղեցի նաև քրիստոնէութեանը՝ սարուկների և սարկութեանից արձակվածներէ, իրավազուրկների և աղքատների, Հոսմի կողմից սարկայիված կամ ցաք ու ցրիվ արված ժողովուրդներէ կրօնը: Այդ մասսաների անսեփութեանը հոսմեական սիրապետութեան ճնշման դեմ պայքարելու գործում, ստեղծեց ընդհանուր հուսահատութեան արաժադրութեան, վորից մարդիկ սկսեցին փրկութեան և միխթարութեան վորոնել նոր կրօնի մեջ, վորը դրախտային յերանութեան եր իտատանում ի վարձատրութեան յերկրի վրա կրած սանջանքների: Մի անգամ չե, վոր տղապես և յեղեր թորեւորդների Համամիութենական Ա համազուլմարում արտասանած իր հասի մեջ ընկեք Մաալինն ասաց. «Տոանչակ ու հարյուրավոր անգամներ դարերի ընթացքում աշխատավորները փորձել են վայր նետել իրենց ուսերից ճնշողներին և գառնալ իրենց վրձակի տերերը: Բայց ամեն անգամ, ջարդված ու խայտառակված, ստիպված են յեղել նրանք հետ նահանջել՝ թաղանիւղ իրենց հոգու մեջ գիրավորանք և ստորացում, վոք և հոսահատութեան

և իրենց հայացքներն ուղղելով անծանօթ յերկնքին՝ հույս են
ունեցել այնտեղ փրկություն գտնելը*):

Ճնշումն ու գրա հանդեսը յեղած անդորությունը ծնեցին
կրոնը, հենց ճնշումն էլ կապիտալիստական յերկրներում սնունդ
և տալիս գրան ու պահպանում:

Կրոնը—ճնշված արարածների հառաչանքն է Բայց բան-
վորը, վերն ինքը կանգնել է շահագործողների գեմ հեղափոխական
պայքար մղելու ճանապարհին և իր ընկերներին ներգրավել է
մասսայական պրոլետարական կազմակերպության մեջ, վորն ինքը
կոմունիստական կուսակցության անգամ է կամ այդ կուսակցու-
թյան համակցող—արդյոք նա նման է ճնշված արարածի, ար-
դյոք աշխատավորների միջից վորեւ մեկի լեզուն կպատվի՞ նրան
այդ բառով անվանելու: Վոչ, մենք այդ բանավորին այդպես չենք
անվանի, թեկուզ և նրան շահագործեն, թեկուզ և նա տպրի
ճնշման տակ:

Իսկ անավասիկ այն ճնշվածը, վորն իր քաղաքական հետա-
մուտքության հետեանքով խոնարհությամբ իր պարանոցը դնում
է շահագործող լծի տակ, վորը հաշավում է իր ստրկական վի-
ճակի հետ, չի կռվում իրեն ճնշողների գեմ իր և իր դատակար-
գի պատուության համար—նա իսկապես վոր վողորմելի արա-
րած է:

Նա չի սփսնում իր գասակարգի ուժերը, չի վատնում իր
սեփական ուժերին, ծանր հառաչանքով, աղոթքով հպատակվում
է կյանքի դժվարություններին: Աշխարհը նրա համար անգութ
է, անոգոք, ժամանակը նրա համար ձախողակ է, այսինքն՝ ծանր,
գժվարին, նույնիսկ տանջալից ժամանակ է:

Կրոնը—ճառագանք է, կրոնը՝ աղաչանք է, ուղղված մարդ-
կային յերեակայությամբ ստեղծված աստվածներին, կրոնը—պա-
ղատանք է ոգնության, վողորմության, կարեկցության մասին:

Ամեն մի մարդու, վորը ներկա յէ յեղել յեկեկեցում, տյապեա
կռկված, ժամաստացության, հայտնի յէ, վոր ամբողջ ժամերգու-

*): Ճառ՝ արաստանած ԽՅԼՄ-ի Խորհուրդների Համամիութնական III Հա-
մագումարում, 1924 թ. 26-ն հունվարի, Մոսկվայում: Ժողովածու Վեներնի
մասին, կոմունիստ մասին), հրատ. «Յերեաստարդ գվարդիայի», 1924 թ-
եջ 8 (սուս. հրատ.):

թյունն անընդհատ աղաչանք ե՛ ուղղված աստծուն և զանազան «սրբերի»:

Ուղղափառ պատարագում կենտրոնական դեմքը, դա — սարկավազն է, վորը չի հոգնում համառորեն զոչելուց. «Այս մասին, այս մասին, այս մասին... տեր, խնդրում ենք», — և նորից «Այս մեկի մասին և այն մյուսի մասին և ելի այս մեկի մասին... տեր, խնդրում ենք»:

Աջակողմյան կամ ձախակողմյան յերգեցիկ խումբն իսկույն սարկավազի աղաչանքը պաշտպանում է հետեյալ խոսքերով.

«Տէր, սուրբ»:

Չկա այնպիսի ժամերգություն, վորի մեջ վորեւ բանի մասին խնդրանք չլինի:

Այդթում են անձրև ուղարկելու մասին, խոյերայից կամ մորեխից աղատվելու համար, մեռածի հոգին փրկելու համար, բարձր բերքի համար, շատ ձուկ վորսալու համար և ելի շատ և շատ բաների համար:

Բոլոր աստվածներն ու սրբերը վորեւ մասնագիտություն ունեն և ադոթողը հաջող կերպով ձուկ վորսալու համար չի պաղատի Պանտելիմոն ըուժարարին, իսկ հիվանդությունից աղատվելու համար՝ Նիկոլ Միրլիկիյսկուն, վորը մասնագետ է ձկան և ծովային գործերում:

«Սուրբ» Վլասին ուղղափառների մոտ համարվում է անասունների սուրբ և սրբապատկերների վրա նրան նկարում են կովերով, ձիերով, վոչխարներով, խոզերով շրջապատված: Անասունների հիվանդության զեպքում մաղթանքն ուղղվում էր հենց Վլասին: Վլասին — անասունների ընդհանուր սուրբն է, բայց բացի նրանից, կան ավելի մասնագիտացած անասնային սրբեր, որինակ ձիերի պաշտպանները — Ֆլորն ու Լավրը:

«Ֆլորի ու Լավրի գութը շարժիր» — ձիերիդ համար բարեբերի սպասիր» — այսպիսի առած է շրջում ուղղափառ գյուղացիների մեջ: «Ֆլորն ու Լավրը — յին բանող ձիու բարեբարքը», «Ֆլորի ու Լավրի վրա ձիերիդ զոռ մի տուր, թի չի անկում կլինի»: Անասունների սուրբ է համարվում նաև Գեվորգը: «Փարիամը — աստծու մայրը» քրեատոնյաների, և ամենից առաջ ուղղափառների կողմից, դիտվում է վորպես դաշտերի, այգիների և բանջարանոց-

ների պաշտօնութեան մասնազետ և սովի ժամանակ գյուղացիները սովորաբար դիմում եյին աստվածածնին, վորը նրանց պետք ազատեր սովից և քաղցից մեռնելուց:

Մեղավարուծութունն ապահովված և իր մասնագետներով— Զոսիմ և Սավվատի «սրբերով»:

Յանքային աշխատանքների սկիզբը, այսինքն՝ ներկը, ցանքը և գարնանային յեղանակը ղեկավարում են մի շարք սրբեր, նման Յերեմյա թագցնոզին, Բորիսին ու Գլեբին, Ֆեդուլին և ուրիշներին:

Որինակ, հետևյալ աղոթքն են ասում. «Աստու մարգարե Յերեմիա, բարձրացրու ցանքսը, Բորիս-Գլեբ, բերքով բեր, սուրբ Ֆեդուլ, ջերմութուն տուր, սուրբ Ֆուստ, ցանիւր հաճար վայրում թիւտ, բերքդ առ փութ»:

Մովազնացները, ձկնորսները և ծովերով, լճերով ու գետերով բոլոր ճանապարհորդներն ու մոլորվածները, քրիստոնյաների կարծիքով՝ պետք է աղոթեն Նիկիոյ հրաշագործին: Բայց Նիկիոյան, ինչպես և Մարիամ աստվածածինը, աստիճանաբար զարձակ չափազանց բազմակողմանի սուրբ, վորը հոգում է և՛ անասունի մասին, և՛ բերք է տալիս, և՛ գլխավոր աստուռ առաջ միջնորդում է մեղավորների համար:

Ձկնային գործով ավելի սահմանափակ մասնազետ և համարվում Պետրոսը, վորը վարում է նաև խոտհունձը:

Հաջող հունձի և առատ կալի համար ուղղափառ գյուղացիներն աղոթում եյին սր. Աֆինագենին: Իր ժամանակին անձրե զարու, կարկուտից ազատվելու մասին, հավատացող ուղղափառների կարծիքով, հոգում է Իլյա մարգարեն:

Ինչպես մենք տեսնում ենք, գյուղատնտեսութունը լրիվ կերպով, յեթէ այդպես կարելի չէ արամահայտվել, «աստիճանաված է» սրբերով, բայց չի վոր մենք ուղղափառութեան մեջ յեղած հողագործական և անասնապահական սրբերից միայն մի փոքր մասը թվեցինք: Ի հարկե, կալվածատերը, վորպես կանոն, չի դիմում հաճոյակատար սրբերին, վորպեսզի ապահովեր դաշտերի հաջող բերքը, անասունների առողջութունը և բերքատվութունը: Նա իր արամադրութեան տակ ուներ գյուղատնտեսներ, գյուղատնտեսական մեքենաներ, անասնաբուժներ և զոտեխնիկներ: Սրբերին չքավորներն եյին կանչում, վորոնց համար գյուղատնտես-

տեսական գիտութեան և տեխնիկայի նվաճումներն ամամասնաբար
եյին: Յեւ, վերջապես, տարերային աղետը կալվածատիրոջ հաճախ
նշանակութունն չունի. մի կալվածքը բերք չեր տալիս, մյուսն
էր տալիս. պատահում էր անասունները վոչնչացում, դրա փոխա-
քեն անտանն երշահավետ կերպով ծախվում, հաջող կերպով առե-
տրրական գործարք էր կատարվում: Իսկ չքավոր կամ միջակ
գյուղացուն սպառնում էր սով և մուրացկանութուն, յեթե ձին էր
ուժից ընկնում, արտն էր կարկտահար լինում, հրդեհն էր խրճիթը
լսփում: Ահա թե ինչու եյին նրանք. յերկնային ոգնութուն փրկու-
ում և իրենց յերեւակայութեան մեջ ստեղծում եյին առաջին, յերկ-
րորդ և ստորին կարգերի մասնազետ աստվածներ— և աղոթում
եյին նրանցից ամեն սեկին՝ նայած թե վորտեղ և ինչպիսի դժ-
վարութիւններ էյին հանդիպել կամ կարող եյին հանդիպել: Կայ-
վածատերերը, կապիտալիստները, կուլակներն ու քահանաները
արբերին յերկրպագիլը պաշտպանում եյին, վորոնց սակայն իրենք
չէյին հավատում: Նրանք շահագրգռված եյին այն բանում, վար
գյուղացիները մնային խավար, մոռացված, տգետ, չկարողանա-
յին գլուխ բարձրացնել և դիտել, տեսնել, վոր իրենց բոլոր
աղետների արմատը կապիտալիստական իրավակարգի մեջ է:

Հավատացյալը դիմում է այս կամ այն մասնազետ սրբին՝
կյանքի բոլոր դիպվածներում:

Որինակ, ընտանեկան դործերով ուղղափառները դիմում են
Պարասկեվին. Ուրբաթին. չրերութեան դեպքում, ծննդաբերու-
թիւնից առաջ, ամուսնու հարբեցողութեան դեպքում, յերեխա-
ների հիվանդութեան դեպքում: Նրանից խնդրում են ամուսնու-
թիւնն. «Մայր Պարասկեվա, հասցրու շուտով փեսան»:

Հիվանդութիւնների դեպքում դիմում են Պանտելեյմոնին,
վորպես գլխավոր բժշկի, ու տենդի, ծաղիկ և ուրիշ տարածված հի-
վանդութիւնների մի ամբողջ շարք մասնազետ սրբերի վողբե-
մածութեան:

Ուսումնասիրելով ուղղափառների հավատալիքներն իրենց
սրբերի մասին, սկսում ես արդեն հասկանալ այն ուշադրով
յերևույթի պատճառը, վորն էր վրա չեր բնեւում շատ հետազո-
տողների ուշադրութիւնը, այժինքն՝ ուղղափառ յեկեղեցիներում
հավատացյալները մոմ եյին վառում ամենատարբեր սրբերի առաջ,
բայց հաղխաբոս դեպքերում էր մոմ բաժին ընկնում հայր-
աստված Սավաֆին:

Այս բանը շատ հասարակ ձևով և բացատրվում. հայր-աստվածը վոչ մի մասնագիտութուն չունի, ինչի մասին պիտի նրան խնդրել. նա մի անգամից ստեղծեց աշխարհը և այլևս վոչ մի բանով զբաղված չէ:

Պարտականութունների բաժանումն աստվածների միջև նշված և վոչ միայն ուղղափառության, այլև բազմաթիվ ուրիշ կրոնների մեջ: Որինակ, հին հունական կրոնում հայտնի չեն այսպիսի «մասնագետ» աստվածներ. Արտեմիդը—վոքսի աստվածուհին է, Դեմիտրը — յերկրագործության աստվածուհին է, նրա աղջիկ Կորան—գարնանային յերկրագործական աշխատանքների աստվածուհին է, Հերան—պտղաբերության աստվածուհին է, Պանը—խաղնարածության աստվածն է, Դիոնիսը—ծառագործության և խաղողագործության աստվածն է, Պոսեյդոնը—ծովային աստվածն է, Գեֆեստը—գարբնության աստվածն է և այլն:

Իոլոր այս մասնագետ աստվածները վորեւ բանով մշտապես հատկանշված չեցին. նրանց մասնագիտութունները փոփոխվում էյին, բազմապատկվում կամ կրճատվում էյին, և այս բանում դարձանալի վոչինչ չկա: Չե վոր հենց ինքը հասարակական կյանքը շահագործող հասարակության մեջ փոփոխվում էր, առաջ էյին գալիս ճնշման այլ ձևեր, մի տեսակի դժվարութունների փոխարեն առաջ էյին գալիս մյուսները և այլն:

Որինակ, Հունաստանում վորոշ ժամանակ Հերմեսը համարվում էր անասունների աստվածը: Բայց յերբ յերկրում առևտուրը դարգացավ, իսկ ամենից առաջ սկսեցին անասնապահական մթերքներով առևտուր անել, անասունների աստված Հերմեսը դարձավ առևտրի աստված:

Ռուսների մեջ Նիկոլայ հրաշագործը ծովերի և ձկնորսների սուրբն էր: Բայց այն ուայոններում, ուր սկզբում ձկնորսութունը գոյութուն ուներ վորպես անտեսության գերագակի ձև, դարգացավ յերկրագործութունը, և սովորական սուրբ Նիկոլան կարծես թե ոժտվում է նոր հատկութուններով, նա է՝ ձիերի սուրբն է, է՝ հմուտ է յերկրագործության:

Քնրուուսական յերգերում կա. «Սուրբ Միկոլա ակոսներով ևս քայլում, ակոսներով քայլում, կյանք ստեղծում...»

Սուրբ Միկոլա—հին մարդա, սիսեռ ցանում, գաշտով քայ-

ըում, կյանքով նայում, ուր թաց է, չորացնում ես, ուր չոր է — թացացնում ես»:

Բայց այս կամ այն աստծու և սրբի մասին յեղած պատկերացումներն ինչպես ել վոր փոխութիւն, մի բան մնում է անփոփոխ. նրան աղոթում են, նրան պաշտում են միայն այն դեպքում, յերբ նա ունի մասնագիտութիւն, վորը մեծ կամ փոքր չափով ավյալ յերկրի, ավյալ ուայոնի մարդկանց համար եյական նշանակութիւն ունի:

Սա ըզխում է հենց կրոնի՝ վորպես ճնշված արարածի հեծեմանքի, վորպես անդուժ աշխարհի հողու, վորպես չար ժամանակների վողու եյութիւնից: Այդ ըզխում է նրանից, վոր պատատանքն ինքնին աստծու հետ ունեցած կապն է, ինդրանքն է կամ շնորհակալութիւնը բավարարված պաղատանքի համար:

Բայց աստծուն ուղղված կրոնական պաղատանքը, ինդրանքը խիստ տարբերվում է այն ինդրանքից, վորով մարդը կարող է դիմել իր մոտիկներին, իր դասակարգային ընկերներին, հասարակական միասնական պաշարի իր զինակիցներին և այլն:

Աստվածներին ուղղված աղոթքում, հիմնականն իր սեփական վոջնչութեան խոստովանութիւնն է. աղոթողն իրեն վորքան ավելի ստորացնի, նրա աղոթքն այնքան ավելի արդյունավետ կլինի, — այսպես է սովորեցնում կրոնը: Աղոթողը չի խնդրում, այլ ստորացած պաղատում է, հեղութեամբ և յերկրային հպատակութեամբ, վախով և սարսափով: Նա սողում է փոշու մեջ, ուղղակի քծնում է աստծու առաջ հուսալով, վոր նա «կը նայի» իր ստրուկին: Յեվ վորոքմելի ստրուկ է դառնում աղոթողը:

Կարիք կմ խոսելու այն մասին, վոր պաղատանքը, վորով հավատացյալները դիմում են աստվածներին ու սրբերին, յերբեք չի բավարարվել, վորովհետեւ դա չի ել կարող բավարարվել, քանի վոր յերբեք և վոչ մի աստված գոյութիւն չի ունեցել:

Աղոթքը—ապարդյուն և զնասակար ինքնամխիթարութիւնն է: Վնասակար է, վորովհետեւ նա մարդուն դարձնում է անկամք ստրուկ, մարդուն ստորացնում է հենց իր իսկ աչքում, զրկում է նրան յերկրի վրա լավագույն բաժին ստանալու համար արժանավայել պայքարելու և իրեն «աստծու կամքին» չը հանձնելու հատկութիւններից:

Կրոնը—ոպիւում է, դա հողևոր ողու ամենավատ տեսակն է:

Ի դար չե, վոր Մարքսը կրոնը համեմատել է ուղիղութի հետ
Մ.յո համեմատութիւնը զարմանալիորեն ձեռք է ե իմաստով
հարուստ:

Յեւ իսկապես, ինչ է ուղիղութի:

Ուղիղութի—Թույն է, վոր պարաստութիւն է խաշխաշի հաստի
տեսակից: Դա ձեռքը ուղիղի քայքայում է առաջացնում: Ս.յո
թույնը ձեռքը ընկնում է յերազանքային դրութիւն մեջ է սո-
վորաբար հաճելի բովանդակութիւնը յերազանքի և տեսնում: Ուղի-
ղութի հաճախակի գործածութիւնը չափազանց վնասակար ձեռք
է անդրադառնում մարդկային որդանիղմի վրա, —ինչպես Ֆիդի-
կական մասի, նույնպես է հողեկանի վրա:

Ուղիղութի ձեռքը տառապում են միտքների թառամածու-
թիւնը, անքնութիւնը, վատ ախորժակով, կամազրկութիւնը,
հողը ընկճվածութիւնը է այլն: Վարժիւելով ուղիղութիւն՝ մարդը
յերազանք է միայն նրա մասին, թե ինչպես անի մեկ անգամ
էս ձեռք, մեկ անգամ էս անձնատուր լինի քաղցր յերազանքու-
թիւնների:

Չինաստանում ուղիղութի գործածելը չափազանց շատ է սո-
րածված, է զլիազորակապէս աշխատավորների միջև:

Յերեկայեցեք վորեք բեռնողի կամ սիլիայի, վորը ձեռք
փոխարեն ուղեորներ է տանում: Յերեկայեցեք այդ մարդկանց,
վորոնք իրենց անասնման ծանր, հողեցուցիչ աշխատանքի հա-
մար ստանում են այնպիսի վորդումելի վարձատրութիւն, վորը
միշտ չե, վոր բավականանում է ընտանիքը կերակրելու համար:

Ս.յո անձնաված չինացին վոր մի հիմք չունի հույս ունենա-
լու, թե շահագործող չինացին, կամ իմպերիալիստ ճապո-
նացին, կամ թե ֆարբիկանա անգլիացին շահագործումը կը թե-
թեացնեն, աշխատավարձը կալելուցնեն:

Ս.յո շահագործող չինացին կարող է գուրս գալ քաղաքա-
կան կռիւ լայն ճանապարհի վրա:

Գիշտութի շահագործողների դեմ մղած կռիւներում, կազմա-
կերպված հեղափոխական պայքարներում նա կը գտնի կյանքի
ուրախութիւնը, նրանում նա ձեռք կը բերի հաճատ՝ դեպի իր
ուրեքը է վատահոթութիւն՝ դեպի աշխատավոր մասսաների հաղթա-
նակը թշնամիների նկատմամբ, ինչպես նաև ձեռք կբերի իսկա-
կան հաղթանակ:

Արդեն իսկ շատ ասարիններից ի վեր Չինաստանում յետում
և քաղաքական պայքարը, Չինական Կարմիր բանակն իր գար-
մանակի քաղաքործություններով ամբողջ աշխարհում հոչակ
ձեռք բերեց, իսկ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը
գլխավորեց ժողովրդական միասնական ճակատի պայքարն
ընդդեմ Փաշխատական Ճապոնիայի, վորը փորձում է Չինաստանն
ստրկացնել, և դրանով իսկ պայքար սկսեց նաև ընդդեմ համաշ-
խարհային Փաշխովի: Տանջված աշխատավորները համար բացվել
ե քաղաքական պայքարի ճանապարհը և միշտ նոքանոր մի-
լիոնավոր չինացիներ մտնում են քաղաքական մարտիկների
շարքերը, վորպեսզի իրենց յերկիրն ադատեն Փաշխատական Ճա-
պոնիայից:

Չինաստանի աշխատավորները Ճապոնիայի դեմ մղած մար-
տերում կոփվում են դասակարգային շահագործման դեմ մղե-
լիք պայքարի համար:

Բայց արդյոք հենց նույն այդ Չինաստանում քիչ են այն-
պիսի մութ, քաղաքականապես անդրազետ մարդիկ, վորոնք չեն
հասկանում, վոր շահագործման դեմ պիտի պայքարել և վոր շա-
հագործողներին կարելի չէ հաղթել:

Այդ մարդկանց առաջ, բացի հուսահատությունից ու խա-
վաքից, վոչինչ չկա:

Նրանք տանջալից աշխատանք են կատարում շահագործողի
համար, իսկ տանը—հարկադրված են նայել իրենց քաղցած
հոր ու մոր աչքերին, քաղցած յերեխաներին ու կնոջը, վորոնք
ապրում են ինչ վոր վորջում, վորին չի նախանձի ականավոր
կարգածատիրոջ կամ Փարբիկանտի շունն անգամ:

Այո՛ր—կիսաքաղց դրություն և է վաղը—դարձյալ նույնը:

Այո՛ր—վոտաբորիկ են և վաղը—ափելի լավ չեն լինի:

Չինացի կուլին վշտից փախչում և դեպի ծխարանը, յեթե
նա քաղաքականապես դեռևս հասունացած չէ, վերջին հինգ կո-
պեկանոցը նետում է ծխարանի տիրոջը և ծխում է, ննջում, ու
մեկը մյուսից ավելի ուրախ յերազնեք է տեսնում. իբր թե իր
բոլոր յերեխաներն էլ, ասես թե ջոկովի յեն, առողջ, և կինն էլ
գոհ է, հայրը մոր հետ միասին բախտավոր են, և բոլորի համար
լիովին հաց կա, և աշխատանքը ծանր չէ:

Այսպես բոլորներով ու ժամերով խաբում է ինքն իրեն

տանջված աշխատավորն ուզիում ծխելով: Այսպես թույնի ոգ-
նությամբ նա իր անտանելի ծանր կյանքը, գալիքում աներ-
ջանիկ և անցյալում անուրախ, փոխարինում և յերազների մի-
ջի կյանքով, յերևակայության մեջ գոյություն ունեցող կյան-
քով:

Այնքան ժամանակ, վորքան վոր ուզիումն ազդում և ծխո-
ղի վրա, ճիշտ և, մարդն ընկնում և մոռացության մեջ: Բայց
միթե անուշի գնով չի գնվել այդ մոռացությունը: Յեղ իսկապես
վոր: Ամեն անգամ ուզիումը ներս քաշելիս՝ ծխողն ավելի ու
ավելի անկենսունակ և դառնում մարմնի և վորու նկատմամբ:
Ուզիում ծխելը ֆլաս և հասցնում ծխողի ամբողջ ընտանիքին,
վորն ավելի պակաս և սնվում թույնի ծախսերի պատճառով, վո-
րը հուզվում և, դիտելով թե ինչպես հյուժվում և ծխող հոր որ-
գանիզմը, վորն առանց այն ևլ քայքայվել և կալվածատիրոջ
կամ գործարանատիրոջ մոտ կատարած ծանր աշխատանքներից:

Իսկ ամենագլխավոր ֆլասն այն և, վոր ծխողը քաղաքա-
կան պայքարից կարվում և և հազվագյուտ զեպքերում և յերև-
վում հեղափոխականների շարքերում:

Ձե՛ վոր նա, զեռ հազիվ արթնացած, սկսում և տենչալ
ուզիումի հաջորդ բաժնի մասին: Համարյա անհաղթահարելի ու-
ժով ուզիումի ծխարանը շրան քաշում և զեպի իրեն: Վորքան
ճնշումն անտանելի յե, վորքան դժվար և կյանքը, այնքան ավե-
լի հրապուրիչ և թվում նրան այս վորջը:

— Բայց ինչո՞ւն և կրոնի և ուզիումի միանմանությունը—
կը հարցնի մեզ ընթերցողը:

Միանմանությունը հենց կայանում և այն բանում, վոր թե
այդ թույնը ծխելը և թե աստծուն հավատալն ինքնին հանդի-
սանում են միջոց դժվարին կյանքը մոռանալու համար, ընկնե-
լու քաղցր յերազանքների աշխարհը, իրական անտանելի կյան-
քը փոխարինելու մի ուրիշ— ֆանտաստիկալիան, յերևակայական
կյանքով:

Թե ուզիում ծխելը և թե կրոնը շահագործվողներին հաշ-
տեցնում են այն անարդ կյանքի հետ, վորպիսին մարդիկ ճշգ-
տում են մոռանալ: Բայց այս տեսակետից կրոնը ուզիումից շատ
ավելի վատ և: Յերը ուզարն անցնում և, ծխողը դիտակցում և
իրականությունն այնպես, ինչպես վոր նա կա, դա նրան թվում

և, թերևս, ավելի թունավոր, քան առաջ. սպիտակը նրա համար միայն միջոց և մոռացութեան մասնակիցը, մի վորոշ ժամանակով նրանից հեռանալու: Կրոնը—շատ ավելի նուրբ թույն է: Նա հարստահարվածին սովորեցնում և հաշտվել ճնշման հետ, նա քարոզում և և ներշնչում, թի տանջանքը—բարեք է: Մարդ վորքան շատ և այստեղ յերկրի վրա տանջվում, այնքան բարձր պարզ և ստանում մահվանից հետո դրախտում: Իսկ այդ պարզ և ստանալու համար պետք է մեջքն ավելի ցածր խոնարհել շահագործողների առաջ, հլու, հնազանդ և սխալ տանել բոլոր տանջանքները, վոր կապիտալիստական իրավակարգը փաթաթում և աշխատավորի վզին: Իսկ շահագործողներին հենց միայն այդ և պետք: Աշխատավորը, վորը կյանքի բոլոր դժբախտությունները համարում և աստծու կողմից ուղարկված փորձություններ և վորը դրա փոխարեն սպասում և հանդերձյալ կյանքի յերանություն, արդեն իսկ չի կարող լինել լիարժեք մարտիկ ընդդեմ շահագործող իրավակարգի:

Կրոնը հասցնում և այն դրութեան, վոր հավատացող մարդը լավագույն կյանքի համար մղվող ակախի պայքարից, շահագործումից իրեն ազատագրելու պայքարից հեռանում և, վեր և ամժվում սրբի պատկերի առաջ ծռենկ չոքած անդործունյա աղոթողի: Այն ժամանակ, յերբ Շիստերնացիոնար հիմնը կոչ և անում բոլոր աշխատավորներին հույս չդնել վոչ աստծու, վոչ, ցարի, վոչ հերոսի վրա, և հիշել, վոր մեր բախտը գտնվում է մեր ձեռքերում, մարդկանց ձեռքերում, վորոնք միացած հն կոմունիստական մեկ գիտակցութեամբ և հեղափոխական մեկ կամքով,—կրոնը, ճիշտ հակառակը, խորհուրդ և տալիս հույս դնել աստծու վրա, միայն ու միայն նրա վրա. մարդն—իր թի, յենթադրում է, իսկ աստված—իր թի, անորի՞նում է:

Ճարտական Ռուսաստանում սպիտակ չեյին ծխում, բայց դքս փոխարեն ողի եյին լսում, և այն ել վոչ փոքր քանակութեամբ: Լենինը, զարգացնելով Մարքսի միտքը, թի կրոնը—ծողովողի համար սպիտակ է, կրոնը համեմատում եր նույնպես ողու հետ: Կրոնի համեմատութեանն ողու հետ նույնքան իմաստալից է, վորքան մարքսյան համեմատութեանն սպիտակի հետ:

Յերբ նահատակվող աշխատավորը, վորը շահագործման լծի տակ աքնում, հեծեծում է, ուժ չի ունենում այլևս առաջադիմանքների

1242
A 5383
II



գիժանալու (և՛ քաղց, և՛ ցուրտ, և՛ խավար), յեթե քաղաքակա-
նապես նա հետամնաց է, յեթե նա վոչ մի տեղից ողնութլուն
չի տեսնում, այն ժամանակ նա դիմում է դեպի ողնաուն:

ՁԹ՝ վոր չափազանց օտարածված մի ասացվածք դոյություն
ունի. «խմում են կակիժից»:

Թույլ կամք ունեցող և քաղաքականապես չդաստիարակված
ժարդիկ, վորոնք հասարակական կյանքից քաշվել են մի կողմ,
այդ անբախտ աշխատավորներն ողու մեջ են վորոնում կյանքի
ծանրության մոռացումը և նրա մեջ խեղդում են իրենց մարդ-
կային կերպարանքը, խեղդում են մարդու համար քիչ թե շատ
արժանավայել կյանքի իրենց պահանջները:

Կակիժից փախչում են դեպի ծխարան, վորպեսզի ամենավտան-
գավոր թույնը—ոպիումը—չնչեն և ընկնեն մոռացության զիրկը:

Կակիժից փախչում են դեպի ողնաուն, վորպեսզի ողիով
հարբեն ու կրկին—հանձնվեն մոռացության:

Կակիժից փախչում են դեպի յեկեղեցի կամ բազմաչարչար
Վառվառեյի մոտ, վորպեսզի իրենց թունավորեն հոգևոր ողիով
և հույս գնելով ապածու ողնության վրա՝ մոռանան կյանքի բո-
լոր ծանրություններն ու հուզումները: Կույր պետք է լինել
չտեսնելու համար բոլոր յերկրների և բոլոր ժողովուրդների շա-
հագործողների հսկայական շահագրգռվածութլունը հարյուրավոր
միլիոն շահագործվող աշխատավորների մեջ ոպիումը, ողին և
ամեն տեսակի քթացնող միջոցները, և ամենից առաջ կրոնը
տարածելու գործում:

Հիշենք, թե ինչպիսի յեռանդով ցարական կառավարու-
թյունը, կալվածատերերը, կուլակները, գործարանատերերը և
առևտրականները հարբեցնում էին նախահնդափոխական Ռու-
սաստանի աշխատավորներին: Ցարական կառավարության բյու-
ջեյում յեկամտի զլխավոր հողվածը «մենաշնորհն» էր, այսինքն՝
ողու պետական վաճառքը:

Բայց ընթերցողը թող չմտածի, վոր իբր թե ցարական կա-
ռավարությունն ողու վաճառքով էր զբաղվում բացառապես ֆի-
նանսական նկատառումներով: Վոչ, ցարական կառավարությունն
ավելի խոր էր նայում այս գործին: Չե վոր գյուղացիությունը
«հուզվում էր» վոչ միայն մինչև ճորտատիրական կարգերից
ազատվելը, այլ նաև ազատվելուց հետո, վորն անցկացվեց գյու-

դացիներէց լավագույն հոգիքը խելու և նրանց վրա ուժից վեր հատուցումներ նշանակելու միջոցով:

Անցյալ դարի վերջին Ռուսաստանի բանվոր դասակարգը դուրս յեկավ քաղաքական պայքարի լայն ճանապարհը և դարձավ աշխատավոր գյուղացիութեան դեկավարը: Շահագործվողները դիմադրութեան ելին ցույց տալիս կալվածատերերին և կապիտալիստներին: Յարական ինքնակալութեանը հեղափոխական շարժումը դաժանորեն եր պատժում: Բայց նազայկաների, բանտերի և քարտրների կողքին, աշխատավորների հետ ունեցած կովում, նա ոգտագործում եր նաև պայքարի ուրիշ միջոցներ— կրոնը և ողին: Ոգովելով բանվորների և գյուղացիների զգալի մասի քաղաքական հետամնացութեանից, շահագործող դասակարգերն իրենց կառավարութեան (ցարական) հետ միասին նրանց յեռանդուն կերպով հարբեցնում ելին: Տերտերներն աժեն տեսակի ոժանդակութեան ելին ցույց տալիս շահագործողներին՝ խրախուսելով հարբեցողութեանը յեկեղեցական բոլոր տոն որերին և ընտանեկան հանդիսավոր որերին, ինչպիսին են պսակադրութեան, յերեսայի ծննդեան և նույնիսկ հարազատների մանկա որերը:

Շահագործող դասակարգերի համար, անշուշտ, ձեռնտու յե, յերբ աշխատավոր մարդը վոչ թե քաղաքական ժողովի, այլ ողիտուն և գնում, չի ձգտում վոչնչացնել և նույնիսկ թուլացնել ճնշումը, այլ ձգտում և այն մոռանալ մի շիշ ողիով:

Յարական կառավարութեան, կալվածատերերի և կապիտալիստների համար չկային ավելի լավ դաշնակիցներ ու հավատարիմ ծառաներ, քան ողին ու կրոնը, ողիաներն ու քահանաները:

Տերբ յիվրոպական կապիտալիստները նեովեցին Ասիա, նրանք սկսեցին Ասիայի հարյուրավոր միլիոն աշխատավորների մեջ ոպիում տարածեր:

XIX դարի կեսին Չինաստանը հրաժարվեց անգլիական կապիտալիստներին—թունավորողներին թույլ տալ ոպիում ներմուծել: Այն ժամանակ Անգլիան պատերազմական պործողութեաններ սկսեց Չինաստանի դեմ:

Ներկայումս Չինաստանում, Անգլիայի հետ միասին, բայց էլ ավելի յեռանդուն կերպով ոպիում և տարածում իմպերիալիստական Ճապոնիան:

Անգլիան և առանձնապես ճապոնական իմպերիալիստները Չինաստանում շատ ֆաբրիկա-գործարանային ու գյուղատնտեսական ձեռնարկություններ ունեն, ուր գրեթե բացառապես չինացիներ են աշխատում: Այդ ոտարերկրյա ձեռնարկություններում աշխատանքի պայմանները տառացիորեն սոսկալի յեն:

Յեզ անա, վորպեսզի չինացի բանվորների մեջ հեղափոխական վոզին չզարթնի, իմպերիալիստները թունավորում են նրանց սպիռմով:

Թող հարբած աշխատավորները թավալին առուներում և ցանկապատերի տակ, թող ժամերով առանց գլխակցության պառկեն ծխարաններում, թող իրենց կյանքը կիսով չափ կրճատեն, թող քայքայեն իրենց որգանիզմը, իրենց կամքը, իրենց ուղեղը, միայն թի նրանք խոնարհ բանվորներ լինեն և անտրբատունջ կերպով իրենց շինքը դնեն կապիտալիստական լծի տակ:

Վոր ալկոհոլի և ոպիումի շատ գործածությունը կապված և աշխատավորներին շահագործելու հանգամանքի հետ, այդ մտախն խոստում և այն նշանակալից փաստը, վոր հատկապես կապիտալիզմի դարաշրջանում այդ թույնների գործածության տարածումը հասնում և ամենամեծ չափերի: Կրոնի ոգտագործումը շահագործող դասակարգերի կողմից նույնպես յերբեք այնպես ակաթիվորեն չի կատարվել, ինչպես այն յեղել և հատկապես կապիտալիզմի որով:

Ցարական Ռուսաստանի յեկեղեցիների գլխավոր շինարարությունը կատարվել և XIX դարի վերջին և XX դարի մինչհեղափոխական ըոլոր տարիներին, այսինքն՝ ճիշտ այն ժամանակաշրջանում, վորի ընթացքում Ռուսաստանում կապիտալիզմն առանձնապես արագ զարգացավ, գյուղում աճեց կուլակությունը, իսկ քաղաքում՝ մեկը մյուսի հետևից ֆաբրիկաներ յերևան յեկան:

Նայեցեք, թե ինչպես աճեց քահանաների և ազանդավորական քարոզիչների բանակն Ամերիկայում և Արևմտյան Յեվրոպայի յուրաքանչյուր յերկրում պատերազմի սկզբին:

XIX ու XX դարերի սահմանադրիսին կապիտալիզմը թևակոխում և իր վերջին ստադիան—իմպերիալիզմի ստադիան: Հենց իմպերիալիզմի եպոխայում յեկեղեցիներ և ազանդավորությունք հասնում են իրենց բարձրագույն ծաղկման շրջանին, իսկ աստ-

ծու բանակը՝ հանձինս տերտերների, սարկավազների, յեկեղեցական հսկիչների, աղանդավորական պարագլուխների, քարոզիչների և կաղմակերպիչների, մեծանում և աշնպես, ինչպես յերբէք:

Ինչձի բացատրել այս փաստը:

Մարքսիզմ-լենինիզմը շատ խոր և ճիշտ պատասխան և տալիս այս հարցին:

Նա ասում է, վոր վնչ Ֆեոդալիզմի, վնչ էլ սարկատիրութեան ժամանակ շահագործումն այնպես մեծ ու դաժան չի յեղել, ինչպես հենց կապիտալիզմի ժամանակ: Մենք գիտենք, վոր կապիտալիստական ճնշումն անտանելի յե, կապիտալիզմի որով աշխատավորների մեջ մասսայորեն տարածվում են թոքախտ, վոսիլրայով, ռախիտ, սակավարյունութիւն, սրտացածի հիվանդութիւնները. աշխատավորները վազաժամ թառամում են, նրանք նույնիսկ իրենց անակից զրկվելու մշտական սպառնալիքի տակ են գտնվում, վորովհետեւ արդշունաբերական բանվորները վոչ սեփական խրճիթ ունեն, և վոչ էլ մի կտոր հող: Մարքսն ու Լենինն ապացուցեցին, վոր կապիտալիզմի զարգացման հետ զուգընթաց հարյուրավոր միլիոն մարդիկ աղքատանում են:

Մարքսն ավելի քան դժվարանում է և ճնշված մարդկանց մտքերն ավելի հաճախ ու համառորեն ուղղվում են դեպի ակուհոլը, ուպիումը, դեպի ազոթքը, ողետունը, ծխելու խցիկը, դեպի յեկեղեցին, մատուռը: Իսկ շահագործողներն այս ամենն ոգտագործում են հողուտ իրենց շահերի: Նրանք ամեն մի հնարավոր բան անում են, վորպեսզի աստծուն հալատալը ռեկլամ անեն, վորովհետեւ կրոնը—աշխատավորների աչքերը կապելու փաթաթան է:

Շահագործողները շքեղ տաճարներ են կառուցում, վորոնց ներսն ամեն կերպ զարդարում են, վորպեսզի հալատացյալ աշխատավորի յերեւակայութիւնը շքեցնեն: Շահագործողները յեկեղեցիների և ազոթատների համար ընտրում են ճարպիկ ճատախոտներ, վորոնք կարողանան իրենց քարոզներով ազոթողներին հմայել և նորանոր հաճախորդներ ներգրավել դեպի յեկեղեցին և ազոթատունը:

Այս նպատակով եւ յեկեղեցականները լավ ձայն ունեցող սարկավազներ ու յերգեցիկ խումբ են ընտրում:

Մանրիկայում կրօնի համար արվող ռեկլամա ամենևին չի դիջում զանազան «բժշկական» խարերայական միջոցների, ածեկներին, տնտեսական իրերի և այլ ռեկլամներին:

Հիմա յեկեղեցի յեն հրապուրում կինոնկարներով, սպերային հուշակավոր յերգիչներով, բոքսյոր-քահանաներով, դոնապան-քահանաներով (Փուլարում) և այլն, և այլն:

Բոլոր միջոցները լավ են, միայն թե ավելացնել զաթոզներ թիվը, միայն թե աշխատավորներին հետու պահել այն ճանապարհից, վորը տանում և դեպի հեղափոխական պայքարը, գեպի մարտական յելույթները, միայն թե շահագործվողների աչքերին կապած փաթաթանը պահպանել:

Հայտարարվում են նոր «հրաշագործ» սրբապատկերներ և ամեն տեսակի «սուբբ» ազբյուրներ, ստեղծվում են «հրաշքներ», վորոնց մասին ռադիոն հաղորդում և, թերթերում հայտարարվում և:

Վորեն ընթերցող կարող և մեզ հարցնել. կապիտալիզմի որով ինչու յե կրօնը տարածված, յեթե կապիտալիզմը և՛ իր տեխնիկայով, և՛ գիտությամբ հայտնի յե:

Մեզ կասեն, վոր մարխի լույսից ելեկարական յամպին և մանգալ ու գերանգուց կոմբային, ձիուց ավտոմորբիլին և տնային բուժումից բժշկականին անցնելը պիտի կրօնին հարվածի: Պարձայլ մեզ կասեն, վոր կապիտալիզմի զարգացման հետ միասին աճում և հեղափոխական շարժումը, ուրեմն հետևաբար նաև տնաստվածությունը:

Մենք կը պատասխանենք. այո, կապիտալիզմի որով արտադրական ուժերի, տեխնիկայի և գիտության զարգացումը քարուքանդ և անում կրօնական շատ միամիտ ու հիմար պատկերացումներ, վորոնք առաջ են յեկել գեուս այն հին ժամանակներում, յերբ մարզը բնության տարերքի գեմ անզոր ու անազնական եր: Բայց միևնույն տեխնիկական կապիտալիստական յերկրներում ուժեղացնում և կրօնական ազդեցությունը, քանի վոր տանում և գեպի շահագործման մեծացումը: Միանգամայն անվիճելի յե, վոր կապիտալիզմի հետ միասին աճում և նաև բանվոր դասակարգը, վորը հետպիտե գտնում և աթիխտական

դասակարգ: Ձի կարելի կասկածել այն բանին, վոր կապիտալիզմի հետ միասին աճում ե նաև շահագործումը, վորը սրում ե դասակարգային պայքարը, շարունակ այդ պայքարի մեջ ե քաշում քաղաքի ե գյուղի պրոլետարների ե կիսապրոլետարների նոր միլիոններ: Իսկ չե վոր հավատացյալ աշխատավորին մարտնչող անաստված դարձնելու ուրիշ ավելի լավ միջոց չկա, քան նրան հեղափոխական դասակարգային պայքարի մեջ քաշելը:

Այդ բոլորը ճիշտ ե: Բայց բանն ել հենց նրանումն ե, վոր մարդուն մարդու կողմից շահագործելու վրա հիմնված դասակարգային հասարակութայն մեջ կրոնի արմատները գլխավորապես սոցիալական են: «Աշխատավոր մասսաների սոցիալական ճնշվածութունը, նրանց կարծեցյալ լիակատար անողնականութունը ապիտալիզմի կույր ուժերի դեմ, վորը յուրաքանչյուր ուր ե յուրաքանչյուր ժամ հազար անգամ ավելի շատ ամենապարսափելի տառապանքներ, ամենավայրենի տանջանքներ ե պատճառում շարքային բանվոր մարդկանց, քան ամեն տեսակի ամենաարտակարգ դեպքերը, ինչպես պատերազմները, յերկրաշարժները ե այլն,—անա թե ինչի մեջ ե կրոնի ժամանակակից ամենախոր արմատը» (Լենին, Յերկ. հ. XIV, եջ 71):

Այդ պատճառով գիտութայն ե տեխնիկայի զարգացումը կապիտալիստական հասարակութայն մեջ չի կարող հասցնել կրոնի հաղթահարմանը: Կապիտալիզմի զարգացումը սրում ե դասակարգային հակասութունները, ե աշխատավորների այն մասը, վորը գեռևս վտռք չի գրել հեղափոխական պայքարի ճանապարհը, ամենից հաճախ ե գիմում աստծուն աղոթքով, վորովհետև ավելի ու ավելի հաճախ ե հարկադրված լինում ճնշումից ծանր հառաչել:

Կատարելագործված տեխնիկան, վոր հնարավորութուն ե տալիս ֆիզիկական ծանր աշխատանքները փոխարինել ֆիզիկական թեթև աշխատանքներով,—նույնիսկ այդ տեխնիկան ուժեղացնում ե աշխատավորների շահագործումը: Մանր ե միջակ տնտեսատերերը վոչ կոմբայն են բանեցնում, վոչ ել տրակտոր՝ վերջիններիս թանգ լինելու ե իրենց տնտեսութայն փոքրութայն պատճառով, բայց դրա փոխարեն նրանցից ոգավում են կուլակը կալվածատիրոջ հետ միասին, վորոնք շուկայում իրենց գներով ել ավելի հաջողութայնը հարվածում են մանր ե միջակ

ապրանք արտադրողներին: Կյանքի պայմաններն այս վերջին-
ներին համար վատթարանում են, կապիտալիստական աշխարհը
բարձր տեխնիկայի գոյությամբ ավելի քան անգութ է դառնում,
տնտես, ճնշված գյուղացու շրջուններն սկսում են ավելի հա-
ճախ ադոլթ մրմնջար:

Իսկ մյուս կողմից, կոմբայնների վրա աշխատում են վարձու
ըտարակներ, վորոնք այժմ ավելի շատ են արտադրում, բայց
հիմա ել առաջվա նման վրտանքներ են ստանում:

Վերջապես, հենց նույն այդ կոմբայնները, տրակտորները
և գյուղատնտեսական դանազան մեքենաները կապիտալիստա-
կան հասարակության մեջ նպաստում են գործադրկության ու-
ժեղացմանը, վորը բատրակների քաղաքականապես հետամնաց
մասի մեջ կրոնական տրամադրությունը բարձրացնում է:

Մարքան ու կենինը մերկացրին կրոնի ամենախորհրդավոր
և ամենախոր եյությունը, յերբ սովորեցրին, վոր կրոնը ճընշ-
ված արարածների հառաչանքն է, վոր դա հոգեվոր ողի յե, վոր
կրոնը ժողովրդի սպիումն է: Միայն մարքո-լինինյան ուսմունքը
կրոնի մասին մեզ բացատրում է, թե ինչու ԽՍՀՄ-ում հավատը
դեպի աստվածն ուժգնորին պակասում է, թե ինչու գյուղում և
քաղաքում անաստվածների բանակն այնպես արագ աճում է:

Այն ժամանակվանից, յերբ յերևան յեկան դասակարգե-
րը, կրոնի գլխավոր պատճառը հանդիտացավ ստրկատերերի,
Ֆեոդալ-կալվածատերերի և կապիտալիստների գործադրած ճըն-
շումը: Այս դասակարգերը կրոնի գլխավոր պաշտպաններն էյին,
ամեն տեսակի յեկեղեցիների և աղանդավորական կազմակերպու-
թյունների հիմնական նեցուկները:

ԽՍՀՄ-ում վերջին տարիների ընթացքում կապիտալիստա-
կան դասակարգերը վերջնականապես լիկվիդացիայի յեն յեն-
թարկվել, ինչպես վոր ավելի առաջ լիկվիդացիայի յեր յենթարկ-
վել Ֆեոդալ-կալվածատերերի դասակարգը, և հաղթանակած սո-
ցիալիզմի Ստալինյան Մահմանադրության 4-րդ հոդվածում
դրված է կատարված փաստի՝ «մարդու կողմից մարդուն շահագոր-
ծելու վոչնչացման» մասին:

Կապիտալիստներն ու կալվածատերերը ազգաբնակիւթյան
հակայական մասսաներին ճնշում էյին, իրենց ձեռքը պահելով
Ֆաբրիկաները, հողերը, բանկերը, տրանսպորտը:

Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխութիւնը և սոցիալիզմի հաղթանակը հասցրին մասնավոր սեփականութեան վերացման: Մեր Սահմանադրութեան 6-րդ հոդվածում ասված է. «Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, հանքանոցները, հանքերը, յերկաթուղային, ջրային ու աղային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետութեան կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկութիւնները (խորհրտնտեսութիւնները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկութիւնները և հիմնական բնակարանային ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական կետերում, հանդիսանում են պետական սեփականութիւն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք»:

Վորքան ծանր եր աշխատավոր գյուղացիների վիճակը մեր մինչհեղափոխական յերկրում, յերբ ամենալավ հողը պատկանում եր կալվածատերերին, կուլակներին, ցարին և գանձարանին, վաքերին ու յեկեղեցիներին, իսկ գյուղացիներն ունեյին միայն ուժասպառ հողի վողորմելի շերտիկներ:

Վորքան ծանր եր նրանց վիճակն առանց մեքենաների, քիմիական պարարտանյութերի և լավ սերմերի (հաճախ ցանքի համար սերմ ամենևին չեր լինում), առանց լծկան անասունների կամ վատագույն ձիով:

Ինչպիսի տանջալից կախման վիճակումն եր գտնվում բանվորը կապիտալիստից, վորը վոչ մի հոգեպահուստ չուներ, բացի իր բանվ. րական ուժը, այն ժամանակ, յերբ ֆաբրիկանոց վորպես անձնական սեփականութիւն ուներ գործարանային կորպուսներ, մեքենաներ, հումք, վառելիք, փող:

Հիմա արտադրութեան բոլոր հիմնական միջոցները դառել են համաժողովրդական ունեցվածք: Հողը կալվածատերերի, կուլակների և մակարույժ վանակ սնների ձեռքից խլված ե և այն մշակում են սովխոզները, կոլխոզներն ու մենատնտես աշխատավորները, ընդվորում հողը, վոր զբաղեցնում են կոլխոզները, ամբացվում ե նրանց առհավետ և ձրի ոգտագործելու համար, ինչպես ասված ե մեր Սահմանադրութեան մեջ:

Շահագործող գասակարգերի լիկվիդացիան մահացու հարված հասցրեց կրոնին: Մենք տեսնում ենք մեր ամբողջ ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի հսկա-

յական անը: Կրօնը—ճնշված արարածներէ հառաչանքն է, բայց ԽՍՀՄ-ում չկա դասակարգային ճնշում, չկա շահագործում, չկան ճնշվածներ:

Կապիտալիստական աշխարհում միլիոնավոր մարդիկ, վորոնք կարող են լավ աշխատել և վորոնք տենչում են զեթ վորեն աշխատանք, անգործ նստած են, իսկ ԽՍՀՄ-ում գործազրկությունն իսպառ վերացված է, և ստալինյան Սահմանադրության 118 հոդ. համաձայն՝ «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ յերաշխավորված աշխատանք ստանալու իրավունք, ըստվորում նրանց աշխատանքը պետք է վարձատրվի նրա քանակի ու վորակի համաձայն»:

Կապիտալիստական յերկրներում յեկեղեցու մեջ են փքնառում մոռացում և միլիթարություն այն աշխատավորները, վորոնք իրենց ամբողջ կյանքում մեջքները ծռում են չափազանց ծանր աշխատանքի տակ, փոքր հասակից (հաճախ 6—12 տարեկան) մինչև խորին ծերություն, առանց հանդատանալու և առանց ժամկետի, առանց յերաշխավորված արձակուրդների, և ամենուրեք առանց շաբաթական արձակուրդային օրերի. «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանդատի իրավունք» (հոդ. 119), իսկ հանգըստի համար ԽՍՀՄ-ում հնարավորություններ ստեղծված են 7-ժամյա բանվորական օր, ամեն մի վեցերորդ օրը—հանգըստ, տարեկան արձակուրդներ բանվորներին և ծառայողներին՝ աշխատավարձի պահպանմամբ, սանատորիաներ, հանդատի տներ ակումբներ:

Կապիտալիստական պետություններում բանվորը, յեթե նա աշխատունակությունը կորցրել է, անցնում է իր վորդիների ինամքի տակ, վորոնք հենց իրենք իսկ ուտելու վորչինչ չունեն, և աստվածային տաճարների հավատացյալների մեջ քիչ չին հենց այնպիսի բանվորները, վորոնց կապիտալիստը զրկել է դոյության միջոցներից:

Այնտեղ, շահագործման աշխարհում, ծերությունն աշխատավորներէ համար—մեծ վորձանք, անբախտություն է: Գործարաններում 40—50 տարեկան բանվորը չի կարողանում հասնել յերիտասարդ բանվորին, և նրան վանդում են, բացարձակապես զրկում են ապրելու միջոցներից:

Իսկ Ստալինյան Սահմանադրության 120-րդ հոդվածում

ասված է. «ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովու-
թյան իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության
և աշխատունակությունը կորցնելու դեպքում»:

Կապիտալիզմի յերկրներում աշխատավոր գասակարգերի
ծերունիները խնդրում են ասածուն շուտափուշթ մահ ուղարկել,
իսկ ԽՍՀՄ-ում՝ ծերունիներն սեղում են ապրել, վորովհետև սո-
ցիալիզմի յերկրում ապրելն ուրախ է, և կյանքը վոչ վոքի հա-
մար՝ ծանրություն չի:

Շահագործման աշխարհում կրթությունը վաղուց իվեր ար-
գեն գարձել է շահագործողների մենաշնորհը:

Միթե բուրժուական յերկրներում քիչ հայրեր ու մայրեր
կան, վորոնք աղոթում են աստծուն, վորպեսզի իրենց յերեխա-
ներին հաջողվի կրթություն ստանալ: Բայց և այս աղոթքները
ինչպես և բոլոր մյուսները, անպտուղ են, և կապիտալիզմը մի-
ջակ և բարձրագույն կրթությամբ ապահովում է համարյա բա-
ցառապես հարուստ մարդկանց:

«ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք», —
ազդարարում է հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրության
121-րդ հոդվածը: ԽՍՀՄ-ում տարրական կրթությունը պարտա-
գիր է բոլոր յերեխաների համար, ուսման համար վարձ չի գանձ-
վում, ուսանողները ճնշող մեծամասնությամբ թոշակ են ստա-
նում, գասավանդությունը տարվում է մայրենի լեզվով, գոր-
ծարաններում, սովխոզներում, կոլխոզներում, ՄՏԿ-ներում աշ-
խատավորների համար կազմակերպվում է արտադրական տեխ-
նիկական և գյուղատնտեսական ձրի ուսուցում:

122-րդ հոդվածում խոսվում է կանանց՝ տղամարդկանց
հետ հավասար իրավունքների մասին: Յեվ իսկապես, ԽՍՀՄ-ն
աշխարհում միակ յերկիրն է, ուր կինը տղամարդուն հավասար
իրավունքներ ունի և չի յենթարկվում նրան, ուր «կանանց այդ
իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում
է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով՝ աշխատանքի,
աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահո-
վագրության ու կրթության ապարիզում, մոր և մանկան շա-
հերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակ
աշխատավարձի պահպանմամբ, արձակուրդ տալով, ծննդաանե-

քի, մանկամտերներէ ու մանկապարտեզներէ լախ ցանցով» (ԽՍՀՄ Սահմանադրութեան 122-րդ հոդվածից):

Կապիտալիստական յերկրներում պրոլետարական ընտանիքի անդամ կիներ, վորն աշխատում և վարձով, կամ Փարբիկայում, կամ որաւարձու աշխատանքում, յենթարկվում և մասնավոր ձեռնարկատիրոջ կամ աշականութուններին և ծաղրանքներին: Նրա աշխատանքը վճարվում և գգալիորեն ցածր, քան տղամարդու աշխատանքը:

Լինինը գրել է. «... մարդկային ցեղի կանացի կեսը կապիտալիզմի որով կրկնապատիչ ճնշված է: Աշխատավորուհին և գեղջկուհին կապիտալից ճնշված են, և բացի այդ, նրանք նույնիսկ բուրժուական հանրապետութուններից ամենադեմոկրատականումն էլ մնում են՝ առաջին՝ վոչ լիբրալ, վորովհետև որենքը տղամարդու հետ հավասարութուն չի տալիս նրանց, յերկրորդ՝ և այս գլխավորն է,—նրանք մնում են «տնային ստրկութեան մեջ», «տնային ստրկուհիներ», ճնշված լինելով ամենամանր, ամենասե, ամենածանր, մարդուն ամենից շատ բթացնող խոհանոցային աշխատանքով և ընդհանրապես մենավոր տնային-ընտանեկան տնտեսութեամբ¹⁾»:

Իսասկարգային, շահագործող հասարակութեան մեջ բավական յերգեր են շարահյուսված կանանց ծանր ճակատագրի մասին: Չարմանալի չէ, վոր կանայք, ընդհունուր առմամբ վերցրած, միշտ ավելի կրոնասեր են յեղել, քան տղամարդիկ:

«Հայրն» ու «յեղբայրները» զուր չէ, վոր այնքան հաճույքով իրենց հեղահամբույր զրույցներով գնում են հենց կնոջ մոտ: Եահագործող հասարակութեան մեջ աշխատավոր կինն ամենաճնշված արարածն է, յեթե միայն նա քաղաքականապես չի հասունացել և շահագործողների դեմ չի սկսել պայքարել:

ԽՍՀՄ-ում, յեթե կինը տղամարդուց վատ չի աշխատում, նա և նրանից պակաս չի ստանում: Իսկ վորպեսզի լավ աշխատի, նա կարող է և՛ դպրոցում սովորել, և՛ տեխնիկումում, և՛ ԲՈՒՀ-ում, և՛ կոլխոզում, և՛ Փարբիկայում:

Բուրժուական պետութուններում կինը, վորպես մայր, յեթե անգամ ոգավում և հարգանքով, ապա միայն առերես, կեղծ հարգանքով, իսկ ԽՍՀՄ-ում այդ հարգանքն իսկական է:

¹⁾ Լինին, Յերկեր, 5. XXVI, էջ 103:

խնամքը՝ իրական, հզի և ծննդկան կանայք ողտվում են արձա-
կուրդներով, աճում և ծննդատների ցանցը, մայրերն ապահով-
ված են կոնսուլտացիաներով, այժմ նրանց համար ստեղծվում
են հանգստի տներ, յերեխաների համար կազմակերպված են
մսուրներ, պարտեզներ, պիտներական լագերներ և այլն:

Գրա համար ել զարմանալի վոչինչ չկա այն բանում, վոր
ԽՍՀՄ-ում կանանց մեջ անասովածուլթյունը շատ արագ կեր-
պով աճում է:

Հետո Միթե ազգային ճնշումը չի նպաստում կրոնին, յերբ,
որինակ, ճապոնացի իմպերիալիստները ճնշում են կորեացիներին
և չինացիներին, անգլիացի իմպերիալիստները—հնդիկներին,
իտալացի իմպերիալիստները—հաբեշներին, գերմանական
իմպերիալիստները—լեհերին և ուրիշ ժողովուրդներին, վորոնք
ապրում են Գերմանիայում:

Ծանր եր աշխատավոր ուղրեկի համար, յերբ ճնշում եր
նրան ուղրեկ-կուլակը կամ ուղրեկ-ֆեոդալը, բայց ել ավելի
ծանր եր, յերբ նրան միանգամից ճնշում էյին և՛ ուղրեկ-շա-
հագործողը, և՛ ռուս շահագործողը, ինչպես վոր այդ տեղի յեր
ուշեհում նախահեղափոխական Ռուսաստանում:

Աշխարհում չկա վոչ մի իմպերիալիստական յերկիր, ուր
ճնշված ժողովուրդներ չլինեն:

ԽՍՀՄ-ում մոտավորապես հարյուրհիսուն ժողովուրդներ
կան, վորոնք շահագործման ճնշումից և ազգային հարստահա-
րումից ընդմիջտ ազատվել են: Լենինիյան-ստալինյան ազգային
քաղաքականությունն ապահովել է նրանց՝ ձեռով ազգային, բո-
վանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հուժկու զար-
գացումը: ԽՍՀՄ-ի ժողովուրդներն ապրում են համերաշխ, վո-
րովհետև Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը
իրար և միաձուլում ժողովուրդների այս զարմանալի ընտանիքը:

Ստալինյան Սահմանադրության 123-րդ հոդվածում մենք
կարդում ենք հետևյալ ուշազրավ խոսքերը. Ճիրավունքների
վորեկից ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդ-
հակառակը, ցեղական և ազգային պատկանելիությունից յեղնե-
լով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավե-
լություններ սահմանելը, ինչպես նաև ցեղական ու ազգային
քաղաքակրթյան կամ ատելության ու արհամարհանքի ամեն

տեսակ քարոզ—պատժվում են որենքով: Այսպիսով, ազգային հարաբերութիւնները միջավայրում ևս կրնին հասցված ե խստագոյն հարված:

Կապիտալիզմի որոք ազգաբնակչութեան ճնշող մեծամասնութեան նյութական դրութիւնը չափազանց ծանր է, իսկ կրօնը, վորը հորդորում է համբերել և հաշտվել, յեռանդուն կերպով պաշտպանում է շահագործող դասակարգերին, ամբախնդելով ժողովրդական մասսաների կարիքն ու աղքատութիւնը:

Իսկ ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, աշխատավորների կյանքի պայմանները շարունակ լավանում են:

Առաջին հնգամյակում ԽՍՀՄ-ում ստեղծվեցին արդյունաբերութեան կարեւորագոյն նոր ձյուղերը, շինվեցին ուժեղ գործարաններ, իրագործվեց չքափոր և միջակ տնտեսութիւնների մասսայական կոլեկտիվացումը, ծավալվեց ՄՏԿ-ների և սովխոզների շինարարութիւնը, ծաղկեց գյուղատնտեսական մեքենաշինարարութիւնը և յիմիական պարարտանյութերի արդյունաբերութիւնը:

Տնտեսական դարմանալի աճը հատուկ է նաև յերկրորդ հնգամյակին, վորը նշանավոր է վոչ միայն նոր շինարարութեամբ, այլև տեխնիկայի յուրաքանչեւ, ստախանովյան հրաշալի շարժմամբ, մեծ քանակութեամբ կոլտնտեսական վորակյալ բանվորների և կոլտնտեսականների, տեխնիկների, ինժեներների, գյուղատնտեսների, բժիշկների, ուսուցիչների կազմերի ստեղծմամբ:

Աշխատավարձն անշեղորեն և արագ աճում է, ընդլորում գործածվող առարկաների շուկայական գնըը նույնպիսի անշեղութեամբ ընկնում են: Գյուղում արդեն վոչ ձի չունեցող, վոչ էլ հող չունեցող գյուղացիներ չկան, չկան նաև գործաղրկութեան և աղքատութեան թեկնածուներ. աղքատութեան պատճառները մեզտնում ընդմիշտ վերացված են: Կոլտնտեսութիւնների յեկամուտներն աճում են:

Լենինի—Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ կոլտնտեսական կյանքը դարձավ ունեւոր, կոլտնտեսականների նյութական և կուլտուրական մակարդակը յուրաքանչյուր տարի աճում է, յերկրագործութիւնն ու անասնապահութիւնն արագորեն բարձրանում են, և 1937 թվին հավաքած հացահատիկը նախնական աղյայներով 6,8 միլիարդ փութ է կազմում: Ընկեր

Մասաչուսեթսի դիրեկտորը՝ մոտակա ժամանակներում 7 — 8 միլիարդ ֆուլթ հացահատիկ հավաքելու մասին՝ կենսադործվում ե: Անաստուաների խնդիրը դժվար եր. կուլտիւններն անասունները մորթուում եյին, պրովակացիայի յենթարկելով նաև միջակներին նույնն անկու: Բայց անա յերրորդ տարին ե, վոր անասունների ընդհանուր քանակը, վոչ միայն մանրերինը, այլև խոշորինը, վոչ միայն յեղջուրավորներինը, այլև ձիերինը՝ ավելանում ե:

Մեր սոցիալիստական հայրենիքի 170 միլիոնանոց ժողովուրդն ավելի լավ ենվում ե ե ավելի լավ հագնվում: Աճում ե ամուր, առողջ յերիտասարդութուն: Յուրաքանչյուր տարի պարզվում ե, վոր Կարմիր Բանակ կանչված յերիտասարդութունն իր առողջությամբ ավելի ամրապինդ ե: Կյանքի նյութական մակարդակի մասին շատ համոզեցուցիչ կերպով խոսում ե 1932 թ. մինչև 1936 թ. ժամանակաշրջանում մանրածախառուարի դեթե յերեք անգամ մեծանալը:

Ճաշխոտական Գերմանիայում տուհաուրը պակասում ե, ե պճողջ աշխարհը զիտե, վոր միլիոնավոր ճնշված, պերմանացիները տարում են առանց յուզի ե հարպի, իսկ հաճախ ել առանց հացի: Այնտեղ արյան պակասությունն ու թոքախաղ հնձում ե՞ն ժողովրդական մասսաներին:

Հուսահատությունն ու ինքնասպանությունները—Ֆաշիստական Գերմանիայում, ինչպես ե Ֆաշիստական Ճապոնիայում ե Իտալիայում, կենցաղային յերեույթներ են:

Իսկ ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, ասրելու ցանկությունն ուրեցոր աճում ե, կյանքն ավելի ու ավելի ուրախ ու զվարթ ե դառնում, իսկ տերտերներն ու աղանդավորական զեկավարները գրանից վոչ ուրախ են, վոչ ել զվարթ:

Բայց ինչո՞ւ, ոչո՞ղ զեպքում, մեր յերկրում զեռես բազմական մարդիկ հավատում են աստուծուն, գնում են յեկեղեցի, կատարում են կրոնական արարողություններ, տոնում են տոները ե իրենց աշխատավորական ուրբիներով պահում են պարադիտների մի ամբողջ բանակ — քահանաներին, յեկեղեցական հեկիչներին, յերգիչներին ե այլն: Այս հարցին մենք կգատախախենք հետեյալ ձևով. ԽՍՀՄ-ում կրոնը պահպանվում ե վորպես անցյալի ճացորդ:

Մի բոպե յերեաղայենք, վոր ԽՍՀՄ-ում վոչ մի հախատա-

ցյալ մարդ չկա: Հիմա հարց տանք մեզ: ԽՍՀՄ-ում կրոն կառու-
ջանո՞ւ, թե չի առաջանա:

Մենք կարծում ենք, վոր վոչ մի նշույլ չենք սխալվի, յեթե
ասենք, վոր ԽՍՀՄ-ում կրոն չի կարող առաջ գալ: Յե՛վ իսկա-
պիս, ինչ հողի վրա կարող եր սոցիալիզմի յերկրում սողմա-
վորվել և դարդանալ հավատ դեպի գերբնական ուժերը: ԽՍՀՄ-ում
շահագործող դասակարգեր չկան, հենց այդ պատճառով ել չկա
նաև հասարակական ճնշումը, իսկ չե վոր կրոնը ճնշված արա-
բածի հառաչանքն ե:

Գուցե սոցիալիստական յերկրի մարդկանց մեջ բնության
ճնշումը հավատ առաջացնելը գեպի աստվածությունը:

Վոչ, այդպիսի յենթադրությունը քննադատության չի դի-
մանում:

Մարդկության արշալույսին հասարակության արտադրա-
կան ուժերն անսահման թույլ եյին, և բնության տարերքն
իշխում եր մարդու վրա, նրան ցած եր թեքում դեպի գետին,
Իսկ անշտ: Այժմ մարդը յերկրագունդը շրջափակել ե յերկաթու-
ղային ռելսերով, շուրջ բաց ե թողել տուրբինների մեջ և
մի ակնթարթում ելեկտրականության հսկայական ուժերն
ուղարկում ե հարյուրավոր կիլոմետր հեռուները, մեկ կի-
լոմետր խորությունից նավթ ե դուրս քաշում, դա վերամշակում
ե բենզինի և ուրիշ արժեքավոր նյութերի, փայտանյութից կամ
ձողախից պատրաստում ե թուղթ, ժամանակակից մարդն իրեն
ձիւղց ավտոյի վրա յե փոխադրում և հին ասնչանքը գորդ-
ինքնաթիռի մասին՝ դարձել ե իրականություն, անվայրեջք
թռիչք կատարելով Մոսկվայից Ամերիկա անողականերով, վո-
րոնք շատ ավելի ծանր են, քան ողը:

Գիտության և տեխնիկայի այս նվաճումներից շատերը կան
նաև կապիտալիստական յերկրներում, բայց այնտեղ նրանք ծա-
ռայում են շահագործողներին, այնտեղ բնության ուժերի հաղ-
թահարումն ոգտագործվում ե կապիտալիստների և կալվածատե-
րերի ոգտին և ուժեղացնում ե դասակարգային ճնշումը:

ԽՍՀՄ-ում գիտությունն ու տեխնիկան ծառայում են միայն
աշխատավորներին. սոցիալիզմի յերկրում բնությունը չի կարելի
թշնամի կամ խորթ մայր անվանել: Վոչ, յերբեմն բնության
ուժերը հարվածում են մեզ, բայց նրանք միայն այն ժամանակ

են հարվածում, յերբ մինք նրանց չենք ուսումնասիրում, վաստակելով ինքնահոսին և «գուցե»-ին ու «թերևս»-ին: Իսկ յեթե մենք նրանց ուսումնասիրում ենք, այդ դեպքում նրանք դառնում են մեր ոգնականները և նույնիսկ՝ մեր ծառաները:

Հյուսիսային բեռում նույնիսկ «չար» քամին ծառայում է Պապանինի գլխավորութեամբ աշխատող մեր նշանավոր չորսին, ոգնելով նրանց ելեկտրական եներգիտ ստանալ դրված հողմաշարժից:

Դյուղացիները, ցարական Ռուսաստանում իրենց վատ ձիով և վատթար զուսթանիկով վատ հողի վրա աշխատելով, և հետծանրաբեռնված լինելով ամեն տեսակի վճարումներով հողուտ կարվածատերերի ու կապիտալիստների, և կուլակին ունեցած ստորացուցիչ պարաքերով, վոչինչ չեն կարողանում անել վնչ մորեխի, վնչ յերաշտի և վնչ ել ուժաթափ յեղած հողի դեմ: Բնությունը նրանց համար չար, խորթ մայր եր:

Իսկ ԽՍՀՄ-ում կոլեկտիվացած գյուղացիութեանն աշխատում է դաշտերում ՄՏԿ-ի և դյուղատնտեսների ոգնութեամբ, ոգտագործելով հողուտ իրեն հողագլխութեան նվաճումները, քիմիան, բուսաբանութեանը և հաղթահարում և յերաշտի հետեանքները, ձգտում է բերքահավաքի կարճ ժամկետների և այլն-լայնորեն գործադրելով արակտորն ու կոմբայնը:

ԽՍՀՄ-ում աշխատավորներն ավելի ու ավելի յեն ձեռք բերում գիտութեան, բնութեանը յենթարկում են իրենց: Բնութեան տարերային ուժերի հանդեպ յեղած անգորութեանն այստեղ չի կարող դառնալ կրոնի առաջացման պատճառ:

ԽՍՀՄ-ում կրոնի գլխավոր արմատները վոչնչացված են, և յեթե ելի շատ մարդիկ հավատում են ասածուն, ապա այդ այն պատճառով, վոր կրոնական իդեոլոգիան չափազանց պահպանողական է: Ընկեր Ստալինն ընդգծեց այն փաստի նշանակոթեանը, վոր մարդկանց գիտակցութեանն իր զարգացմամբ հետ է մնում նրանց փաստական դրութեանից: Նոր հասարակութեանն առաջացավ, ամբողջ դասակարգեր դադարեցին գոյութեանն ունենալ, արմատապես փոխվեցին և՛ բանվոր դասակարգը, և՛ գյուղացիութեանը, իսկ ԽՍՀՄ-ում դեռ կրոնը կա, և նրանից ստացվող վնասը խոշոր է:

Բոլորը գիտեն, թե վորքան ամուր են արժատանում մարդկանց մեջ զա աղան պատկերացումները, վորոնք բազմաթիվ տասնամյակներէ, իսկ մի քանիսն ել—գարեբի ընթացքում են կազմվել:

Մասնավոր սեփականատիրական իդեոլոգիան պահպանողական ե: Միայն հեղափոխական դասակարգն ունի հեղափոխական, և վոչ թե ճանճացման իդեոլոգիա:

Կրոնական հայացքներն տանձնապես պահպանողական և ապրող են: Կրոնը խցկիլում է մարդկանց գլուխն որորոցից, յերբ յերեխային սովորեցնում են աղոթել, մինչդեռ նա դեռ քայլել անգամ չի կարողանում, յերբ յերեխային հայտարարում են, թի բոլոր քաբիքներն աստված և ուղարկում, յերբ ամեն քայլափոխում աստվածային պատժով են սպառնում նրան:

Միաժամանակ պետք է ընդգծել մի շատ կարևոր փաստ, այսինքն՝ վոր կրոնական ընտանիքում յերեխային աղոթել են սովորեցնում ամենամոտիկ, ամենաթանգագին մարդիկ, ինչպես մայրն ու հայրը, պապն ու տատը, մորաքույրերը, քույրերը և այլն:

ԽՍՀՄ-ում կան շատ ազնիվ աշխատավորներ, վորոնք զեռեւ չեն աղատվել կրոնական թմրությունից, վորոնք յերեխաներին գաստիարակում են կրոնական վոգով: ԽՍՀՄ-ում կան քահանաներ և աղանդավորական «յեղբայրներ», վորոնք վատ փորձ ձեռք չեն բերել կրոնական զգացումներն ոգտագործելու խնդրում: ԽՍՀՄ-ում կան նախկին կուլակներ, սպեկուլյանտներ և խորհրդային իշխանության ուրիշ թշնամիներ, և նրանք կրոնական հողի վրա լարում են, ում վոր հաջողում են, կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության դեմ:

Հետո, ԽՍՀՄ-ում կան վոչ քիչ լրտեսներ, դիվերսանտներ, ֆաշիստական վարձկա ներ հանձինս տրոցկիստների, աջ հակահեղափոխականներ և բոլոր այդ սրիկաները՝ ատելով խորհրդային իշխանությունը և սոցիալիստական պետությունը, հոգուտ ֆաշիզմի ոգտագործում են հավատը թե դեպի աստված, և թե դեպի սատանան:

Նույն պես չպիտի մոռանալ, վոր ԽՍՀՄ դեռևս գտնվում է կապիտալիստական շրջապատման մեջ, վորի մեջ շարդուփշուք արված շահագործող դասակարգերի մնացորդներն ուղղակի պաշտպանություն են գտնուած:

Այդ կապիտալիստական շրջապատումը և նրա ազենառւթան յերկրի ներսում սնում և սաշագանում են սոցիալիզմի թշնամի գրոհական իդեոլոգիան:

Կրոնի դեմ, վորպես շահադործական անցյալի մնացորդի դեմ, պետք է պայքարել համառորեն և հետևողականորեն, չմոռանալով, վոր դա արմատացած է վոչ թե անհատներէ, այլ համեմատաբար մեծ մասսայի գլխում:

Այդ պայքարը պիտի մղել ագիտացիայի և պրոպագանդայի և մասսաներին հակակրոնական պայքարի համար կազմակերպելու միջոցով: Հակակրոնական ագիտացիան և պրոպագանդան սոցիալիզմի յերկրում տալիս են հսկայական դրակառն արդյունքներ, վորովհետև ոյնտեղ արդեն ճնշվածներ չկան, տարեցտարի կյանքն ավելի ուրախ և զվարթ է դառնում, համաժողովրդական տնտեսութունն արագ կերպով աճում է, անգրագիտութունը վերացվում է, յերիտասարդ սերունդն ամբողջութեամբ ստանում է լայն կրթութուն, մարդու առողջութեան խնամքը բազմապատկվում է:

Գործն ունի նաև մի այլ կարևոր կողմ, վորի շնորհիվ մեր անաստվածական ագիտացիան թալիս է լավ պատեղներ. մենք ինկատի ունենք կողպերացիան իր բոլոր ձևերով, և ամենից առաջ կռիկտիվացումը:

Յերբ վոր հավատացյալ մարդն ընկնում է առանձնահատուկ դժվարին սրայմանների մեջ, նա փնտռում է հենարան, նա ուզում է ոգնութուն ստանալ:

Այդ ոգնութունը նա կարող է ստանալ ուրիշ մարդկանցից, պետութունից, կուսակցութունից, կողպերացիայից, պրոֆմիութունից, փոխադարձ ոգնութեան կոմիտեից:

Իայց յերբ հինց այդպիսի բնական, նյութական օժանդակութուն ստանալն անհնար է, հավատացյալ մարդը ծունկ է չորում սրբապատկրի առաջ. բնական ոժանդակութեան բացակայութեան պատճառով նա փնտռում է գերբնական ոժանդակութուն. նա ձգտում է աստծուն, վորպես հենարանի, հենց այն պատճառով, վոր ինքն իր վրա արդեն հուշս չի դնում, կարծես թե ինքն իրեն կորցնում է, վոր իր ընկերներէ, բարեկամներէ, վորեւէ կազմակերպութեան վրա նույնպես հուշս չի դնում:

«Սոցիալիզմ և կրոն» հոդվածում Լենինը խոսում է միայնակութեան մասին, վորպես կրոնականութեան մի պատճառի և դա ամբողջութեամբ համապատասխանում է Մարքսի մտքին. «կրոնը մարդու ինքնաճանաչումն ու ինքնազգացումն է, վորը կամ իրեն դեռ չի գտել, կամ արդեն նորից կորցրել է իրեն»*)։

Յեվ իսկպես, չէ՞ վոր բուրժուական հասարակութեան մեջ ամենակրոնական դասակարգը մանր սեփականատերերի դասակարգն է հանդիսանում։ Քանանաներն ունի մեջ ավելի շատ մեծարողներ ունեն։ Մանր և միջակ գյուղացիներն մեջ, տնայնագործների և արհեստավորների, մանր խանութպանների մեջ։

Նրանք մանր ապրանք-արտադրողներ են և հարկադրված են խոշոր ապրանք-արտադրողներին—կալվածատերերին, կուլակներին, կապիտալիստներին, ֆաբրիկանտներին, խոշոր սուևարականների գրոհին դիմանալ։ Նրանք այս գրոհին դիմանալ չեն կարողանում և վերջիվերջո դառնում են կապիտալիստների զոհերը։ Վաղվա որվա համար նրանք վոչ մի վստահութեան չունեն։ Վաղվա որվա համար՝ մանր տնտեսատերերը շարունակ տագնապի մեջ են։ Մի անբերք տարի—և անա աշխատավորը դառնում է կուլակի ստրուկը։ Ձին ստակեց—և անա մանր կամ միջակ գյուղացու գրութեանն անելանելի յե։

Անա այսպիսի դեպքերում մանր տնտեսատերն իրեն կորած է համարում։ Յեթե նրա ձին ստակեց, հարց է առաջ դալիս, ինչ միջոցներով նա կարող է նոր ձի գնել։ Նա այդ միջոցները չունի։

Գուցե նրան պետութեանը կողմի։ Վոչ, կապիտալիստական պետութեանը նրան չի ոգնի։

Գուցե գյուղացուն վորևե ոգնութեան ցույց կտա մանր սեփականատերերի դասակարգը։ Վոչ, նա հիմք չունի սրա վրա ևս հույս դնելու։ Մանր սեփականատերերը միաձուլված, միացած չեն։ Մանր սեփականատերն իր դասակարգի վրա հույս դնել չի կարող, իսկ իր վրա առավել ևս, վորովհետև մի ծաղկով դարուն չի գա,—և անա տուժած մենավորն շտապում է հրաշագործ սրբա-

*) Մարքս—Իրավունքի հեգելյան փիլիսոփայութեան քննադատութեանը Յերկեր, հատոր I, էջ 399.

պատկերներէ, սրբերի և զանազան մասնագիտությունների աստ-
վածներէ մտա:

Սոցիալական միայնակությունը կրօնի համար չափազանց
բարեհաջող հող ե:

Ամենաստատուած դասակարգը մարդկային գոյության ամ-
բողջ ժամանակաշրջանում, այդ—պրոլետարիատն է: Բայց չի
վոր մեզ լավ հայտնի չէ, վոր այդ դասակարգն ամենամբողջա-
կանը, ամենամիաձուլն է, վոր բանվոր դասակարգի մեջ և իս-
կական ճշմարտությամբ հնչում հետեյալ լոզունգը,—բոլորը մեկի
համար և մեկը բոլորի համար:

Բանվորները կենտրոնացած են Փաբրիկաներում և գործա-
բաններում, շախտերում և հանքերում, հարլուրավոր և հազարա-
վոր մարդով մեկ ձեռնարկության մեջ: Նրանք միացած են աշ-
խատանքի և կյանքի ընդհանուր պայմաններով: Կապիտալիստա-
կան լերկրներում նրանք միացած են ընդհանուր պայքարով
կապիտալիստների դեմ:

Բանվորին չի կարելի դասել սոցիալապես միայնակների
կարգը: Յեթե կապիտալիստական ձեռնարկության մեջ բանվորն
ընկնում է շատ վատ դրության մեջ, որինակ, բռնվում է վտան-
գավոր հիվանդությամբ, նրա ցեխում աշխատող ընկերներն
այսպես թե այնպես առաջին ոգնությունը ցույց կտան, ոգնու-
թյան կզա նաև պրոլետարական հեղափոխական կազմակերպու-
թյունը:

Բանվորը հույս է գնում այս աշակցության վրա, և նրա
մաքերը հազվագեպ են ուղղվում աստու կողմը: Իսկ մանր սե-
փականաանքը պեաք է հույսը դնի միայն իբ վրա, բայց վորով-
հետև նրա ուժերը տառաջիորեն վոչինչ են հանդեպ այնպիսի
մրցակիցների, զորոնք ամենեին չգիտեն մարդկանց խնայել, ինչ-
պես կույտիլը, կալվածատերը, Փաբրիկանաը, վաճառականը, բան-
կերը, ապա ուրեմն նա գիտակցելով իր անզորությունն ու միայ-
նակությունը, իրեն նետում է տեր-ասածու թաթերի առաջ:

ԽՍՀՄ-ում Լենինի կոսպերատիվային պլանը կյանքում
կենսապարծվել է ընկեր Ստալինի գեկավարությամբ:

Համկ(բ)ի XV համագումարը ավելց գյուղի սոցիալիստական
վերակառուցման գիրեկտիվն ամենից առաջ կուլեկալիստական մի-

լացով, այսինքն՝ գյուղատնտեսական արատադրանքի կողակերպուցումով:

1937 թ. գրեթե ամբողջ գյուղացիութիւնը, բացի մի քանի տեղոս տնտեսութիւններէից, արդեն կողակերպացած եւ

Միայնակութիւնը գյուղացիութեան միջից ընդմիջտ՝ վերջնականապէս և անդառնախորեն վերացված եւ

Կողակերպացումը միացրեց մենատնտեսներին անջատված ուժերը և վոչնչացրեց հասարակական միայնակութիւնը:

Կոլտնտեսականը հանձնինս յուր կոլտնտեսութեան ունի բնական հենարան: Կոլտնտեսականը չի կարող գործազրկութիւնից կորչել, վորովհետև սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում լիովին վոչնչացրեց գործազրկութիւնը: Կոլտնտեսականը չի կարող ազքատանալ, վորովհետև սոցիալիստական սիստեմը վոչնչացրեց աղքատութեան աղբյուրները:

Կրօնը—ասում եւ Լենինը,—առաջանում եւ ճնշման և միայնակութեան հետևանքով:

Սոցիալիզմի յերկրում չկան վնչ ճնշում, վնչ եւ միայնակութիւն: ԽՍՀՄ-ում կրօնն իր գոյութիւնը պահպանում եւ միայն վորպէս մնացորդ, բայց մնաւակար մնացորդ, վորը խանդարում եւ աշխատավորներին լինել լիարժեք մարտիկնեց սոցիալիզմի հետագա հաղթանակներէ համար:

Բուրժուական իշխանութեան ժամանակ կրօնն ուժեղ եւ այնպէս, քան յերբեք, վորովհետև հարյուրավոր միլիոն մարդիկ կը ված են կապիտալիստական շահագործման բեռան տակ: Բայց արդեն կապիտալիստական յերկրներում ապրում և պայքարում եւ մի դասակարգ, վորը վստան և իր ուժերին, վորը համոզված եւ վոր ինքը կհաղթի: Այդ դասակարգի մարդիկ—դանադան յերկրներէ պրոլետարները հույս չեն դնում վնչ աստու, վնչ հերոսի, և վնչ եւ վորևե հրաշքի վրա, այլ միայն իրենց վրա, իրենց դասակարգային համերաշխութեան և կազմակերպվածութեան վրա: Նրանք հույս են դնում իրենց դասակարգային կամքի և իրենց դիտակցութեան վրա, իրենց ընդունակակութեան վրա՝ հեղափոխական սպայքարի ճանապարհին հարյուրավոր միլիոն մանր սեփականատերերէ ներգրավելուն, վորոնք նույնպէս տքնում են կապիտալիզմի և ֆեոդալիզմի լծի տակ: Այս դասակարգի առա-

Չովոր մասի մարդիկ, այսինքն՝ հեղափոխական պրոլետարները, զինչ մի աստված չեն ճանաչում: Նրանք — անաստվածներ են, նրանք չեն խոնարհվում և զոչ մի տեսակ զգվարության տաջ, այլ, ընդհակառակը, աշխատում են միահամուռ ուժերով հաղթահարել նրանց:

Կապիտալիստական յերկրների բանվորներն իրենց կողմն են ներգրավում մանր սեփականատերերին, չքավորներին, նրանց քաշում են հեղափոխական պայքարի մեջ:

Իսկ յերբ հեղափոխական բանվորները, չքավորագույն գյուղացիության հետ միասին, կապիտալիստական թուրթուղիայի ձեռքից խլում են իշխանությունը, նրանք անջատում են յեկեղեցին պետութունից, դպրոցը՝ յեկեղեցուց, քահանաներին զբհում են իրենց արտոնյալ գրությունից և ծավալում են հակա-կրոնական լայն աղիտացիա և պրոպագանդա: Նրանք դիտեն, վոր կրոնական մնացորդները կշտաքար են, կապած աշխատ-վորների վոտքերին, վորը խանգարում է նրանց բանվոր դասա-կարգի ավանգարդի հետ համաքայլ ընթանալ նույն ուղիով դեպի կոմունիզմը:



Խոսելով կրոնի մասին, վորպես ժողովրդի ուխտումի մասին, մենք պիտի գործի մի այլ կողմն ևլ շոշափենք, վորի կյությունը հետևյալումն է: Հավատը դեպի աստված սնվում է մի աղբյու-րով ևս: Դա տարերայնությունն է, կապիտալիստական տնտե-սության անալանայնությունը: Կապիտալիստական յերկրներում իշխանությունը բուրժուազիայի ձեռքումն է, վորը բոլոր ուժե-րով պաշտպանում է հողի, նրա ընդերքի, գործարանների, յեթ-կաթուղիների և այլնի մասնավոր սեփականության իրավունքը:

Կապիտալիստական արտադրության սխտեմն անխուսափե-լիորեն հասցնում է այն բանին, վոր մի կողմում կուտակվում են ահագին հարստություններ, մյուս կողմում աճում են կարիքն ու աղքատությունը:

Աշխատանքի և կապիտալի միջև յեղած անհաշտելի հակա-սությունները, տարերայնությունը, անալանայնությունն ան-խղիճորեն կապված են կապիտալիստական տնտեսության ամ-

ըողջ սխտեմի հետ և կարող են վոչնչանալ միայն կապիտալիզմի հետ միասին: Լենինը, խոսելով կրոնի սոցիալական արմատներին մաթին, գրում էր. «Յերկյուղ կապիտալի կույր ուժի առաջ, ժողովը կույր է, վորովհետև ժողովրդական մասսաների կողմից չի կարող կանխատեսվել, վորը պրոլետարի և մանրիկ անտեսափրոջ կյանքի ամեն մի քայլափոխին սպառնում է բերել նրան և բերում է «հանկարծակի», «չսպասված», «պատահական» քայքայում, կործանում, աղքատացում, պառւպերացում, պոռնկութուն, քաղցած մահ—անա ժամանակակից կրոնի այն արմատը, վորն ամենից առաջ և ամենից շատ մասերիալիստը պիտի ի նկատի ունենա, յեթե նա չի ցանկանում նախապատրաստական դասարանի մասերիալիստ ննալ»^{*)}:

Կապիտալիստական տարերքը, այս բանոյց վոչ մի կտակած չի, հանդիսանում է հարուստ աղբյուր, վորը սնում է բոլոր նրանց կրոնական գգացումները, ովքեր դառնում են այդ տարերքի դոնը:

ԽՍՀՄ-ում կրոնի այդ աղբյուրը գոյութուն չունի: Արտադրութեան բոլոր հիմնական միջոցները պատկանում են հիմա պետութեանն ու կոոպերացիային (նույն թվում և ամենից առաջ կրոնատեսութուններին), միանձնյա անտեսութուններ քիչ են: Պեսցել, և պետութունն անում է ամեն բան, ինչ վոր կարող է, միայն թե ոգնի նրանց շուտով և հաստատապես կանգնել կոլեկտիվացման ճանապարհին:

ԽՍՀՄ-ում ամբողջ անտեսական կյանքն ավելի ու ավելի կտուրցվում է միասնական պլանով, վորը մահացու հարվածներ է և հասցնում ամեն տեսակի «գուցե»-ներին ու «թերևս»-ներին:

ԽՍՀՄ Սահմանադրութեան 11-րդ հոդվածում նշված է. «ԽՍՀՄ-ի անտեսական կյանքը վորոշում է նրան ուղղութուն և տալիս պետական ժողովրդատեսական պլանը՝ հողուտ հանրային հարջտութեան ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ԽՍՀՄ-ի անկախութեան ամրացման և նրա պաշտպանունակութեան ուժեղացման»:

Տրոցկիստները և բուխարինականները գուրս էյին գալիս պետական պլանների դեմ, վոր կաղմված էյին կոմունիստական

^{*)} Լենին—Բանվորական կուսակցութեան զեբաբերմունքը գեպի կրոնը: Յերկ. հատ. XIV, էջ 71.

կուսակցութեան գիրեկտիվներով: Դիվերսանտները, լրտեսները և տեղորոշողները, տրոցկիստներն ու բուլբուլիստները, ժողովրդի այդ անարգ թշնամիները, հաղթանակած սոցիալիզմի յերկրի թշնամիները, կատարելով իրենց Ֆաշիստ տերերի կամքը՝ հանձինս Հիալերների և Դյորինգների, անդրդվելիորեն կանգնել ելին դեպի հինը վերագառնալու, դեպի կապիտալիստական իրավակարգի կողմը. նրանք մեր յերկիրը քաշում ելին դեպի տարերքը, դեպի մասնավոր սեփականատիրական հարաբերությունները, դեպի այն, վորը միշտ կրոնին պաշտպանել և և վորի համար մինչև ամենավերջին ժամանակը պայքարում և ամեն մի կրոն—կաթոլիկականն ու հրեականը, ուղղափառն ու մահմեդականը, բուդդայականը և ամեն մի ազանդավորականը:

Պայքարելով պրոլետարական դիկտատուրայի ամբողջուման համար, մեր յերկրի աշխատավորները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ վոչնչացնում են սոցիալիզմի բոլոր թշնամիներին, իրենց մեջ ամբողջելով հավատ՝ դեպի իրենց սեփական ուժերը և էլ ավելի յեն համոզվում այն բանում, վոր սոցիալիզմի յերկրում՝ ժողովուրդն և յենթադրում, նա ինքն էլ տնորինում և:

Յեւ այսպես, բոլոր արմատական պատճառները, վորոնք առաջացնում են կրոնը և նրան սնունդ են տալիս, ԽՍՀՄ-ում վերացված են:

ԽՍՀՄ-ում չկան շահագործող դասակարգեր և շահագործում:

ԽՍՀՄ-ում չկա մի ազգի բռնություն մյուսի վրա:

ԽՍՀՄ-ում չկա կանանց իրավազրկություն և ձնշում:

ԽՍՀՄ-ում չկա գործազրկություն և աղքատություն: Դրա փոխարեն, մեզ մոտ կա 170 միլիոնանոց ազգաբնակչութեան աշխատավորների կյանքի նյութական և հոգեկան մակարդակի աճ, վոր տարեցտարի մեծանում և:

ԽՍՀՄ-ում չկա տարերքի տիրապետություն, այլ հաղթանակում և պետական միասնական պլանը:

ԽՍՀՄ-ում չկա սոցիալական (հասարակական) միայնակություն և Լենինի կոոպերատիվային պլանն իրականացված և ընկեր Ստալինի հանձարեղ ղեկավարութեամբ:

Բայց քիչ և կրոնի սոցիալական արմատները վոչնչացնելը:

Պեճերածեղատ և մեր ամբողջ ժողովուրդը դասախարակելու կոմունիստիկ և մարտնչող անաստվածության վոգրով:

ԽՍՀՄ-ում կուլտուրական ֆրոնտում նշանակալից աշխատանք է յեռուս: 1936-37 ուս. տարում տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում էր 28,8 միլիոն յերեխա. նույն տարին ԲՈՒՀ-երում սովորում էր 542000 մարդ: Սովորողների թվով մեր յերկիրն աշխարհում բունում և առաջին տեղը Բացվում են նոր գրադարաններ, վորոնք 1936 թ. հասան 55,900 ի, 1032 թվի 32500-ի դիմաց:

Նույն ալը 4 տարվա ընթացքում ակումբների և խրճիթ-ընթերցարանների թիվը 49300-ից բարձրացավ 80446-ի:

Սակայն կապիտալիզմի մնացորդները շատ աշխատավորներին կհնցողի և դիտակցության մեջ գեռես չեն հաղթահարված: Իհուև մեծ աշխատանք ւնենք կատարելու աշխատավորների սոցիալիստական վերագաստիարակմա՝ գործում. այս աշխատանքն առանձնահատուկ նշանակութուն և ստանում Խորհուրդների առաջիկա ընտրությունների կապակցությւ մը:

Մեզ մոտ շոտ գործող դասակարգեր չկան. նրանք վերացված են: Բայց ԽՍՀՄ-ում կան կուլակաթափ արված կուլակներ, ամեն տեսակի «անցյալի» մարդիկ, վորոնք գուն սվորվել են և թագընում են իրենց ւնեցած ատելութունը դեպի սոցիալիզմի գործը:

Այս մարդիկ կ'անեն ամեն բան, ինչ վոր կարող են, վորդեսդի քաղաքականապես հետամնաց մարդկանց քվեարկությամբ իրենք թափանցեն Խորհուրդների մեջ կամ խցկեն այնտեղ իրենց հաճատարիմ թեկնածուներին:

ԽՍՀՄ մեջ բազմահազար յահանաներ, սարկավագներ, յեկեղեցական հսկիչներ, մուլաներ ուսրբիներ, կսեսձներ (կաթուղիկ քահանաներ), ավիտարանական յեղբայրներ և բազտիստներ են ապրում. նրանք բոլորն առևտուր են անում հոգևոր ողիով, սպիռումով—կրոնով:

Իրենց ամբողջ շխտմբ նրանք միշտ և ամենուրեք պայքարել են շահագործող մասսա երի հեղափոխական շարժման դեմ, կուլակութան հետ միասին մասնակցել են խորհրդային կշխանության դեմ կազմաերպած դավադրություններին, վնտանել են կ'խողորներին, համոզել են չմտնել կուլտոզները գործ չունենալ ՄՏԿ-ների հետ և այլն, և այն:

Յեկեղեցական և աշտնաշովորական աղի սատարները և հաղ-
 մակերպիչները բոլոր այս հազարներն ու տասնյակ հազարները,
 վորոնց ձայնը դեռևս ունկընդորւմ են բանվորական և գյուղա-
 ցիական ընտանիքների քաղաքականապես հետամնաց անդամնե-
 քը, հիանալի գիտեն, վոր կրոնը—թըմբեր և, ժողովրդի ոպիուենե
 ե, և նրանք այս ոպիուեմը տարածւում են յերկրում ոգովելոմ
 ամեն մի առիթից. և յերեսաների ծննդից, և թանգագիրների,
 մերձավորների մահվանից, և այլն: Յեկեղեցիների հովանու և
 ազանդավորական աղոթատների հարկի տակ ապաստարան են
 դաել համաշխարհային Ֆաշիզմի գործակալները, վորոնք մեր
 կյանքի բոլոր ընազավառներում քնասարարություն են կազմա-
 կերպում. լրտեսներն զբաղվում են տեղորիստական շարժունեյու-
 թյամբ սոցիալիստական յերկրի լավագուշն մարդկանց դեմ:
 Ղոր Ֆաշիզմի գործակալները ԽՍՀՄ-ի հավատացյալ աշխատա-
 վորների կրոնականությունն ամեն կերպ ոգտագործում են սո-
 ցիալիզմի, Խորհուրդների և կոմունիստական կուսակցության
 դեմ, այս մասին վկայում են բազմաթիվ փաստեր: Ժողովրդի
 թշնամիները, վրասարար տրոցկիստներն ու բոլխարինականները,
 վորպեսզի սոցիալիստական շինարարությունն իր կարևորագուշն
 մասերում իսփանեն, գործադրում են ամենանողկալի միջոցնե-
 քը, հաճախ ամեն գուշնի յեկեղեցականների հետ միացած գոր-
 ձելով:

Ավելի շատ հեղափոխական զգոնություն: Աշխատավորները
 մեծ ուսուցիչ կարլ Մարքսն ասում եր. «Կրոնի՝ վորպես ժողո-
 վրդի խարուսիկ յերջանկության վոչնչացումը, նրա իրական
 յերջանկության պահանջն ես՝»:

Այս իրական յերջանկությունն աշխատավորները Լենինի—
 Ստալինի կոմունիստական կուսակցության զեկավարությամբ
 նվաճել են մեր յերկրում՝ շահագործողների, կապիտալի դեմ
 ժղած հեղափոխական պայքարում:


Ընկեր Ստալինը Խորհուրդների VII Արտակարգ Համագու-
 մարում Սահմանադրության նախագծի մասին արտասանած իր
 ձառի մեջ այսպես խոսեց հալթանակած սոցիալիզմի յերկրի Սա-
 մանադրության մասին. «Պա կը լինի մի պատմական փաստա-

1) Կ. Մարքս—Իրավունքի հեղեյան փիլիսոփայության քննադատու-
 թյունը: Յերկ. հատ. 1, էջ 300:

թուղթ, վորը պարզ ու սեղծ, հաժարյա արձանագրական վոճով
կը խոսի ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փաս-
տերի մասին, կապիտալիստական սարկությունից ԽՍՀՄ-ի աշ-
խատավորների ազատադրման փաստերի մասին, ԽՍՀՄ-ում ծա-
վալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթու-
թյան փաստերի մասին:

Դա կը լինի մի փաստաթուղթ, վորը կը վկայի, թե այն,
ինչի մասին յերազել են և շարունակում են յերազել միլիոնա-
վոր աղնիվ մարդիկ կապիտալիստական յերկրներում,—արդեն
իրականացվել է ԽՍՀՄ-ում¹⁾:

Մեր սոցիալիստական հայրենիքի 170 միլիոնանոց հզոր
ժողովուրդը վոչնչացնելով կապիտալիզմը, շարունակ է իր վրա-
յից նաև կրոնի—աշխատավորների հոգևոր ճնշման գործիքի շքե-
թաները:



Пров. 1940.

¹⁾ Ի. Վ. Մատևի—Ձեկուցում ԽՍՀ Միության Մահմադարության Դա-
կազմի մասին: Գլուհրատ, 1938, էջ 50:

007 02 2018

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՒՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՒՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՒՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



FL0023139

ՀԻՆԸ ԿՈ ԿՈՊ.

558

A 5383

ՎԱ. ՏԱՐԱԲՅԱՆՈՎ

ՐԵԼԻԳԻԱ—ՕՍՈՒՄ ՆԱՐՈՎԱ

ԳԻՅ ԱՐՄ. ՍՏՐ